

ՏԱՐԵՐՔ ԱԶԳԱՅԻՆՈՒԹԵԱՆ

Պրոֆ. Ֆ. ԲԱՏՅԷԼ

I

Մարդկային ազգի բնակութեան տեղը, կազմութիւնն ու քանակութիւնը:

Մարդիկ բնակւում են երկրագնդի բարեխառն և տաք երկրներում ու կղզիների վրայ, մասամբ նոյնպէս հիւսիսային կիսագնդի ցուրտ աշխարհում: Ամբողջ մարդաբնակ աշխարհը, որի մակերևութը, առանց ծովերի, մօտաւորապէս 2,4 միլիոն աշխարհագրական մղոն է, կարելի է երկուսի բաժանել. մէկ՝ բնակւային անմարդաբնակ սառնապատներին կից հիւսիսային և հարաւային ծովեզրեայ երկրները, մէկ էլ արևելեան և արևմտեան, որոնց մէջ տարածուած է Ատլանտեան օվկիանոսը: Այս ծովեզրեայ երկրներում բնակուող ազգերն ամեն կողմից շրջապատուած չեն իրանց նմաններով և առանձնացած դիրք ունին. այդ դիրքը հարկաւ պատճառ է լինում ազգագրական աղքատութեան: Ընդհակառակն ազգերը խմբուած են այնպիսի կէտերում, ուր հաղորդակցութեան նշանաւոր առաւելութիւնն են վայելում. այսպիսի կայանների ենք հանդիպում Խաղաղական Ռօվկիանոսում, նա-մանաւանդ դրա հիւսիսային ծովեզրեայ երկրներում, Միջերկրական ծովի սահմաններում և միջին Ամերիկայում: Երկրի դիրքից ու կազմութիւնից պարզ երևում է, որ հիւսիսային կիսագունդն աւելի մեծ քանակութեամբ մարդկանց բնակալայրեր է մատակարարում, քան հարաւայինը. որ երկրի այդ մասն աւելի ընդարձակ, ամեն կողմից շօշափուող և բազմատեսակ շքեղութեամբ լի աշխարհներ է ներկայացնում և դրանով աւելի ճոխ կազմակերպութեան կարելիութիւնն է առաջ բերում—մի խօսքով՝ հիւսիսային կիսագունդն իւր դիրքով, կազմութեամբն ու տարածութեամբը մարդկութեան զարդացման նպատակների համար ի սկզբանէ անտի դերադանց է հանդիսանում:

Մարդկանց, ինչպէս նաև կենդանիների ու բոյսերի ծաւալման հիմքը կազմում են դրանց կապակցութիւնը հիւսիսում և բաժանումը՝ հարաւում: Եթէ մարդկութիւնն ի նկատի ունենանք իբրև մի ամբողջութիւն, կտեսնենք, որ նրա հիւսիսային մասերն ընդարձակ և փոխադարձ կապակցութեան մէջ են գտնւում, իսկ հարաւային մասերը միմեանցից բաժանուած են: Եթէ մի ականարկ զցենք մարդկային ցեղերի վրայ, կտեսնենք, որ նեգրոսները պատկանում են հարաւին, իսկ մոնղոլներն ու սպիտակամորթները հիւսիսին: Քաղաքակրթութեան ամենաբարձր զարգացումը հասարակածից դէպի հիւսիս է զրտնւում:

Ատլանտեան ովկիանոսի շնորհիւ երկրի գօտու մէջ առաջացած խորին անդունդը նույնպէս ծովեզրեայ աշխարհներ է ստեղծում: Սակայն թէև այս աշխարհները՝ միջօրէականի ուղղութեամբ տեղի ունեցած կենդանի հաղորդակցութեամբ, ներսի երկրների բնակիչների խտութեամբ և կլիմայական աւելի յաջող հանգամանքների շնորհիւ այնպէս աղքատ չեն, ինչպէս որ հարաւի և հիւսիսի աշխարհները, բայց և այնպէս Ամերիկայում զարգացման ամենաբարձր աստիճաններն արեւելեան կողմին են գտնւում, Ամերիկայում—արեւմտեան, այսինքն Ատլանտեան ովկիանոսից հեռացած եզրային երկրներում: Անտարակոյս Աֆրիկայի ազգաբնակչութիւնը սերտ կերպով կապակցուած է Ասիայի ազգաբնակչութեան հետ, այն ինչ Ամերիկայի ազգաբնակչութեան հետ ունեցած մօտիկ յարաբերութեան հետքն անգամ չկայ: Սակայն այդ կապակցութիւնն ասիական ցամաքի արեւելեան եզրներից աւելի հեռու է տարածւում և հասնում մինչև Ասիայի մեծ կղզիները: Այդպիսով հիւսիսի և հարաւի եզրային երկրների մէջ առաջ է գալիս մի մեծ քաղաքակրթութեամբ տարածութիւն, որ իբրև արեւմտեան՝ կարելի է հակադրել խաղաղական Ովկիանոսի վրայով մինչև Ամերիկա հասնող արեւելեանին: Այս բաժանման հիմնական գաղափարներն են «երկաթ» և «ոչ երկաթ»: Թէև արեւմտեան մասը հիւսիսում աւելի մեծ տարածութիւն ունի քան արեւելեանը, բայց և այնպէս հիւսիսային և հարաւային երկրների:

մէջ տեղի ունեցած հակադրութիւնը, որ հետզհետէ աւելի ակն-
յայտնի է լինում մինչև այդ սահմանների ուղղանկիւն կերպով
միմեանց հանդիպելը, դարձեալ մնում է: Սահմանների
այդ խաչաձև իրար հանդիպելում ժամանակի տարբերու-
թիւն է նկատուում մարդաբանական և այս ազգա-
գրական խմբակցութիւնների մէջ: Ազգերի ամենավերջին զար-
գացման գործում, անկասկած, մեծ դեր է խաղացել երկաթը:
Երկաթ ունեցող և աներկաթ երկրների սահմանը միանում է
ուրիշ նշանաւոր ազգագրական տարածութիւնների սահմաննե-
րի հետ: Ուր երկաթ չկայ, այնտեղ անձանօթ է նաև անաս-
նապահութիւնը, որի նեցուկներն են՝ եղն ու կովը, գոմէշը,
ոչխարը, այծը, ձին, ուղղը և փիղը. աներկաթ երկրների մե-
ծագոյն մասում անյայտ է նոյնպէս խոզ և հաւ պահելը: Աւե-
լի աչքի է ընկնում ընկերական և քաղաքական հանգամանքնե-
րի տարբերութիւնը. Ամերիկայում, Աւստրալիայում և ովկիա նեան
աշխարհներում տիրում է աւելի հնագոյն զարգացումն, այսինքն
խմբերի ամուսնութիւն, (gruppenehe) օտարացեղ ամուսնութիւն
(exogamie), մայրական իրաւունք և ընտանիք. իսկ Ասիայում,
Աֆրիկայում և Եւրոպայում տիրում է ընտանիքի նահապետա-
կան համակարգութիւնը, այսինքն գոյգերի ամուսնութիւն և
պետութիւնների կազմակերպութիւն՝ ըստ ժամանակակից հասկա-
ցողութեան: Ուրեմն մարդկութեան մէջ էլ արեւելքն ու արե-
մուտքը միմեանց հակառակ են կանգնած: Ամերիկան մարդ-
կութեան ծայրագոյն արեւելքն է և այստեղ աւելի սպասելի են
հին զարգացման աստիճանները՝ քան թէ Աֆրիկայում և Եւ-
րոպայում, որ ծայրագոյն արեւմուտքն են ներկայացնում:

Մարդկային ցեղերի ծաւալուիլն այսպիսի պարզ պատ-
կեր չէ ներկայացնում: Նեգրոսներն էապէս հարաւային ցեղ են.
նրանց հիւսիսային սահմանը Աֆրիկայում անապատն է, հա-
րաւային Ասիայում շարունակւում է լեռների միջով և նկատելի
կերպով դուրս է ցցւում միայն Ինդոսի անկիւնում, հիւսիսային
արեւադարձի վրայ, և ընկղմում է ովկիանեան աշխարհում հա-
տարակածի տակ: Մեր աչքի առաջ ունինք ուրեմն մի հարա-
ւային պետութիւն, որ զլխաւորապէս պատկանում է արեւելեան

կիսազնդին, որի փակ և ամենամեծ երկրները բոլորը միասին զտնւում են արեւադարձային և հարաւային բարեխառն գօտի-ում: Հարաւային դիրքի վրայ ազդում են գետնի այստեղ իշխող հանդիսացող և տարօրինակ ձևակերպութիւնները: Մինչ դեռ հիւսիսի և հարաւի մէջ եղած աշխարհագրական հակադրու-թիւնն ամբողջ երկրի շուրջն է տիրում, մարդաբանական-ազգա-գրական հակադրութիւնը սահմանափակւում է այսպէս կոչուած՝ հին աշխարհով և նրա մասերով: Այդ տեղ է գտնւում երկրի այդ մասի մարդկային յայտնութիւնների և գիւտերի հարստութեան մեծ մասը որ ամենա-բարձր զարգացման հետ ներփակւում է նաև ամենաուտո-րինը: Ամերիկայում մի ցեղ գոյութիւն ունի թէ հիւսիսում և թէ հարաւում, այնտեղ այնպիսի մեծ ազգագրական տարբերութիւն-ներ չկան, ինչպէս որ հիւսիսային և հարաւային Աֆրիկայում, հիւսիսային և հարաւային Ասիայում և Աւստրալիայում: Մար-դաբանութեան տեսակէտից Ամերիկան իր ամբողջ տարածու-թեամբ պատկանում է հիւսիսային երկրներին, իսկ ազգագրա-կան տեսակէտից՝ մասամբ միայն:

Ընդհակառակն Աֆրիկայի և Ասիայի համար ամենանշա-նաւոր խնդիրն այն է, թէ ինչպէս են յարաբերում միմեանց հարաւային և հիւսիսային երկրները: Այստեղ նրանք խիստ տարբերւում են զանազան սահմանազօծերում: Նեգրոսների և հիւ-սիսային Աֆրիկայի մէջ տարածուած է հաղորդակցութիւնը խանդարող անասլատը. այդ մասերից ամեն մէկը մեծ է և ինքնուրոյն: Հարաւային Ասիան բաղկացած է հիւսիսից և մէջ-տեղը ոչ բոլորովին բաժանուած ու թոյլ կերպով միացած մա-սերից: Հնդկաստանն այնպիսի ազդեցութիւնների է ենթակայ եղել, որոնք տարբերում են նրան Աֆրիկայից. մարդաբանական և մասամբ նոյնպէս ազգագրական տեսակէտից՝ Աֆրիկան աւելի հին, այսինքն միւսնոյն ծագման աւելի քիչ փոփոխուած դրու-թիւնն է ներկայացնում, քան Հնդկաստանը: Աերջապէս Մալայ-եան երկիրը Մագակասկարով և Հնդկաստանով որոշում է հիւսիսա-յին ազգերի ճիւղերի մուտքը դէպի հնդկա-աֆրիկական աշ-խարհները:

Քանի որ Աֆրիկայի հիւսիս-արեւմտեան ծայրից մինչև

Ֆիդշի ձգուող տարածութեան վրայ սեամօրթ ցեղերը շփուում էին սպիտակամօրթների հետ, հասկանալի է, որ դրանք միմեանց հետ պէտքէ խառնուէին: Այսպիսի զանազան աստիճանի խառնուրդ ունեցող ցեղերը բնակւում են Սուդանում, Սահարայում, հիւսիսային և միջին արևելեան Աֆրիկայում, հարաւային Արաբիայում, Մադակասկարում, հարաւային առաջաւոր և անդրդանգէսեան Հնդկաստանում և Աւստրալիայում: Նեգրոսների խառնուրդի մի-մի հետք գտնում ենք հարաւային Եւրոպայում և ծայրագոյն Պօլինէզիայում: Փակ դրութեամբ միայն աւստրալիական լաորոշուող ցեղը կարողացել է զարգանալ: Սեամօրթ, գանգրահեր և երկարագլուխ այդ ցեղն առաջացել է ըստ երեւոյթին պապուասների և մալայ-պօլինէզեան տարրերի խառնուրդից: Պապուասների — տիպի ըստ ծագման անյայտ առանձնայատկութիւնն այստեղ ևս աչքի է ընկնում. դրան աւելանում է նաև այն ախտաբանական շարժառիթը, որ գտնւում է քաղաքակրթութեան ստորին աստիճանի և աղքատիկ կեանքի թողած հետքերի մէջ:

Միմիայն ծովերի ջրային մակերևոյթը հաւասարւում է երկրի ամբողջ մակերևոյթի համարեա՝ երեք քառորդին. այսպիսով բոլոր ցամաքն՝ իրենից համարեա թէ երեք անգամ մեծ ծովի մէջ գտնուող կղզի է: Մարդկութեան զանազան մասերն իրենց պատմական տեղափոխութիւններով շատ անգամ հասել են ծովին. նաւագնացութեան գիւտից առաջ կար ժամանակ, երբ ծովը մարդկութեանը շրջափակում էր երկրի այն սահմաններում, ուր նրա որորանն էր: Նաւագնացութեան գիւտը, որի առաջին արգասիքը վաղուց արդէն կորել է, — երկրի ամեն մասերում մենք գտնում ենք նաւագնացութեան արուեստի բարձր զարգացման և դրա հետ միասին այդ արուեստի անգիտութեան հետքեր — կարելի դարձրեց մարդկանց ծաւալուիլը երկրի համարեա թէ բոլոր մարդաբնակ մասերում: Երկրի զանազան մասերում պատահում ենք նաւաշինութեան և նաւագնացութեան արուեստի զարգացման բարձր աստիճանների՝ ամենից շատ Խաղաղական Ովկիանոսում և ամենից քիչ Ատլանտեան Ովկիանոսում: Նաւագնացութեան արուեստն անհաւասար տա-

ընթացումով շուտով մոռացուելու յատկութիւնն է կրում, այդ պատճառով և նրա չգոյութիւնն ու նոյն իսկ չիշուելն ի նկատի ունենալով՝ չպէտք է շուտով եղբակացնենք, որ մարդիկ բոլորովին և շարունակաբար հեռու են մնացել ծովից: Մարդաբնակ աշխարհի այժմեան մեծութիւնը մի վաւերագիր է մարդկութեան խորին ծերութեան՝ այն տեսակէտից, որ սակաւաթիւ հեռաւոր և փոքրիկ կղզիների բացառութեամբ, համարեա՛ն թէ արդէն բռնում է բնակութեան յարմար բոլոր տեղերը:

Ջրի ընդարձակ ծաւալուիլը մարդու համար սնունդի հարուստ աղբիւրներ բացեց և այդ պատճառով էլ ջրի եզերքների վրայ մարդկային խիտ բնակութիւններ հաստատուեցին: Ջրի ծաւալման շնորհիւ կարելի դարձաւ հեռաւոր հաղորդակցութիւնը, որ հին ժամանակներն անկարելի էր՝ ամեն տեղ թշնամիներով լցուած երկրների լիջով. բարձր քաղաքակրթութիւնն էլ եզերքներից տարածուեց դէպի երկրի ներսերը: Այդ պատճառով ևս ջրի ծաւալուիլը մարդկանց հողու վրայ նոյնպէս զարմանալի ներգործութիւնն ունեցաւ. ամենայն տեղ նկարուած աշխարհի պատկերներում տեղ է բռնում ծովի հորիզոնը: Չատերը երկիրն ըմբռնում են իբրեւ ընդարձակ ծովի մէջ գտնուող կղզի և հանդերձեալ աշխարհը՝ հեռու, ծովի մէջ: Այդ պատճառով էլ հոգին ջրի վրայով պէտք է ճանապարհորդէ. դրանից է առաջանում նաև այն հանգամանքը, որ դադաղին տրուում է նաւակի ձև, նաւակը թաղւում է կամ թէ փոքրիկ նաւակը ծառայում է գերեզմանաքարի տեղ — ինչպէս՝ դայեակներն են անում:

Մարդկային սեռի միութիւնն այն երկրային և մոլորակային յայտարար նշանն է, որ յատուկ է ստեղծագործութեան ամենաբարձր աստիճանին: Իրաւացի է, երբ զիտնական մտքով խօսում ենք մարդկային սեռի միութեան մասին, եթէ միութիւնն ասելով հասկանում ենք՝ ոչ թէ միատեսակութիւնը, այլ ժողովուրդների կեանքի ամեն ասպարէզներում վկայութիւններով ապացուցուած միաբանութիւնը հաղարաւոր տարիներ պարփակող պատմութեան մէջ, ինչպէս նաև բնութիւնից տրուած բնական հողի միութիւնը: Եթէ քաղաքակրթութեան յա-

առաջադիմութեան ամանակը — տեմպօ — վերջին պատմական դարաշրջաններում մասամբ այնպէս արագ է ընթացել, որ որոշ ազգախմբեր միւսներից շատ առաջ են անցել, այնուամենայնիւ այսօրուայ մարդկութեան՝ ինչպէս ամենաբարձր, նոյնպէս և ամենաստորին շերտերի մէջ կարելի է գտնել ընդհանուր ստացուածքի մեծամեծ մնացորդները: Եթէ հարց տրուի այդ ընդհանուր ստացուածքի ծագման մասին, կարելի է նորից մատնացոյց անել այն հանգամանքը, որ անդուլ շարժողութիւնն է մարդկութեան նշանացոյցը: Դրա ոյժի և յարատեւութեան հետ համեմատելով՝ երկիրը փոքր է. հազարաւոր սերունդներ, որ մեզնից առաջ են եղել, նոյն — իսկ առանց կամենալու էլ, կարող էին երկրի շուրջը պտտել՝ սկսած այն վայրկեանից, երբ ծովի ու գետերի վրայով ընթացող նաւերը գտնուեցան: Սակայն այդ վայրկեանը շատ հեռու է մեզանից: Միմիայն կարճատեւ յաւանութիւնը կարող է համարել իբրեւ ընդհանուր պատմութեան դեռ ևս չհասած գազաթնակէտ այն հանգամանքը, որ Ամերիկայի գիւտից յետոյ, 400 տարուայ ընթացքում, եւրոպացիք կտրողացան իրենց հետ միասին տարածել այնտեղ նաև իրենց ընտանի կենդանիները, պէտքական բոյսերը, զէնքերն ու զործիքները, իրենց կազմակերպութիւններն և կրօնը: Կօլումբօսից առաջ միայն նօրմանները չեն գտել Ամերիկան: Այս աշխարհը, որ մենք փքուն խօսքով «Նոր» ենք անուանում, արեւմուտքից աւելի քան մէկ անգամ պէտքէ գտնուած լինէր, մինչև որ գունատադէմք եւրոպացիներն, իբրեւ վերջին գտնողներ, արեւելեան կողմից մօտեցան նրա ափերին: Երբ մալայեացիները հազիւ մի քանի դարերի ընթացքում, 200 երկարութեան աստիճան տարածութեամբ սփռուեցան, Մադակասկար և Օստեր կղզիների վրայ, — ինչպէս որ ապացուցուած է այդ նրանց լեզուով և ուրիշ հանգամանքներով, — երբ եւրոպացիների գիւտից յետոյ Ամերիկայում առանձին ցեղերն իրենց բնակավայրերից հինգ հարիւր մղոն հեռացան, երբ Աֆրիկայի ամբողջ կէս մասի վրայ, լայնութեան քառասուն աստիճանների տարածութեամբ միմիայն բարբառով զանազանուող — ինչպէս օրինակ վերին և ստորին գերմաներէնը — մի լեզու է խօսւում՝ պէտք է համաձայնել, որ եւ-

րոպական քաղաքակրթութիւնն առաջինը չէ, որ տարածուել է ամբողջ աշխարհում: Մեծ տարբերութիւնը միայն այն է, որ ինչ այսօր տեղի է ունենում գիտակցօրէն, նախորդ հազարաւոր տարիներին ընթացքում կատարուել է անորոշ բնագոյմամբ՝ ընդհանուր պատմութեան ընթացքում Աղէքսանդրի և Ալուամբօսի ձեւքով, իսկ ոչ պատմական ժամանակներում՝ հազարաւորներէ շնորհիւ:

Մարդկանց թիւը սերտ կապ ունի բնակութեան տեղի հետ, որովհետեւ վերջինս նշանաւոր ազդեցութիւն ունի նրանց ներքին զարգացման, ծաւալման և յարաբերութիւնների վրայ: Մարդկանց այսօրուայ հազար հինգհարիւր միլիօնի չափ հաշուող ընդհանուր թիւը պէտք է նկատենք արդիւնք այնպիսի զարգացման, որին առաջ չէր հասել մարդկութիւնը: Այժմեան հանգամանքների զարգացումն աւելի մեծ չափով կախումն ունի ազգաբնակութեան շատութիւնից, քան թէ կարծւում է սովորաբար: Ազգերի կազմակերպութիւնը, եւրոպական և ասիական քաղաքակրթութեան շրջանից դուրս, թույլ չէ տալիս խիտ ազգաբնակութիւն հաստատելու: Երկրի մի աննշան կտորը մշակող փոքրիկ համայնքները միմեանցից բաժանուած են ընդհանրապէս դատարկ տարածութիւններով, որոնք կամ իբրեւ որսատեղի են ծառայում, կամ թէ անպէտք դատարկ ընկած են: Դրանք ըստ կարելոյն սահմանափակում են հաղորդակցութիւնը. մարդկանց աւելի մեծ և մնայուն ամբօրումն անկարելի է այդտեղ: Արտորդութեամբ զբաղուող ազգերը, որ բոլորովին երկրագործութեամբ չեն պարապում կամ թէ շատ չնչին տեղ են տալիս դրան, յաճախ այնպէս անօր են բնակւում, որ ամեն մի քառակուսի մղոնի վրայ միայն մի մարդ է ապրում. հազուադիւտ չէ նաեւ աւելի անօր մարդաբնակութիւն: Արտեղ մի փոքր երկրագործութեամբ ևս զբաղւում են, ինչպէս օրինակ հնդկական շատ ցեղերի, գայեակների և պապուասների մօտ, տասից մինչև քառասուն մարդ են ապրում մի քառակուսի մղոնի վրայ. իսկ Աֆրիկայի ներսը և Մալայեան Արշիպէլագոսում, ուր երկրագործութիւնն աւելի բարձր զարգացմանն է հասել, մի քառակուսի մղոնին գալիս է հարիւրից մինչև երեքհարիւր մարդ: Հիւ-

սխալին Ամերիկայի Հիւսիս-արեւմտեան եզրաքնակ և ձկնորսութեամբ զբաղուող ազգերը բնակւում են իւրաքանչիւր քառակուսի մղոնի վրայ մինչև հարիւր մարդ. նոյն խտութեամբ են բնակւում նաև թափառական հովուական ցեղերը: Ավիանեան կղզիներում, ուր թէ՛ ձկնորսութեամբ և թէ՛ երկրագործութեամբ են պարապում, իւրաքանչիւր քառակուսի մղոնի վրայ գտնւում են մինչև հինգ հարիւր մարդ: Նոյնչափ խտութեամբ են բնակւում նաև առաջաւոր Ասիայի մեծ մասամբ անապատանման երկրներում ապրող թափառական և նստակեաց խառն ցեղերը: Այսպիսով արդէն ոտքներս դրինք հողի մի ուրիշ ձևակերպութեան շեմքը, որն իւր հնդկական-ասիական երկրներում՝ իւրաքանչիւր մղոնի վրայ կերակրում է տասը հազարից աւելի մարդ, իսկ եւրոպականում, արդիւնաբերութեան և հաղորդակցութեան օգնութեամբ, տասնևհինգ հազար մարդ:

Արդէն այս թուերը ցոյց են տալիս զանազան դօտիններում և երկրներում ապրող ազգերի ստորին աստիճանացոյցը: Բոլոր բնական ազգերը բնակւում են անօսր տարածութեան վրայ: Բարձր քաղաքակրթութեան հետ միանում է նաև խտաբնակութեան բարձր աստիճանը: Առաջիններն աւելի մեծ կախումն ունին գետնի յատկութիւնից, քան վերջինները. միատեսակ կազմութիւն ունեցող երկրներում նրանք ընդհանրապէս հաւասարաչափ խտութեամբ են բնակւում: Լաւ մշակուած, բայց անօսր բնակուած, ընդարձակ ցորենի դաշտերի և պարտէզներով ծածկուած խտաբնակ երկրների տարբերութիւնները քաղաքակրթութիւնից են առաջանում:

Խիտ ազգաբնակչութիւնը գրաւական է ոչ թէ միայն դօրեղ աճման, այլ նաև քաղաքակրթութեան անմիջական յառաջադիմութեան: Մարդիկ որչափ աւելի մօտ շօշափեն իրար, այնչափ աւելի կհաղորդեն միմեանց իրենց մտքերը, այնչափ աւելի քիչ քաղաքակրթութեան արդիւնքներ կկորչեն, այնչափ աւելի կբարձրանայ բոլոր ոյժերի գործադրութեան մրցումը: Ազգերի թուի աւելանալն ու հաստատուն դառնալը սերտ կապակցութիւն ունի քաղաքակրթութեան զարգացման հետ: Ուր ընդարձակ տարածութեան վրայ անօսր ազգաբնակչութիւն կայ,

այնտեղ քաղաքակրթութիւնն էլ ստորին աստիճանի վրայ է գտնուում. իսկ թէ հին և թէ նոր քաղաքակրթութեան կենդրոններում՝ միշտ խիտ ազդաբնակութեան ամբոխումն է եղել: Չինաստանում և Հնդկաստանում վեցհարիւր միլիօնից աւելի մարդ է բնակւում, այն ինչ դրա չափ տարածութիւն ունեցող ներքին Ասիայի՝ Մոնղոլիայի, Տիբէթի և արևելեան թուրք ազգերի երկրներում հազիւ դրա վաթսուներորդ մասը: Երկրի մարդաբնակութեան վեց-եօթերորդական մասը պատկանում է քաղաքակրթուած երկրներին:

Մինչդեռ եւրոպական ազգերի պատմութիւնը դարերից ի վեր աճման նույն հաստատուն ձգտումն է ցոյց տալիս, որ արդէն տեսնում ենք հնագարեան պատմութեան մէջ, բնական ազգերը տատանման և լետադիմութեան այնպիսի օրինակներ են ներկայացնում, որ առաջինների մօտ չենք հանդիպում կամ թէ միայն կարճ ժամանակով ենք գտնում՝ այն էլ պատահական հանգամանքների ազդեցութեան շնորհիւ, ինչպէս օրինակ պատերազմների և համաճարակների միջոցին: Անօտ մարդաբնակութեան մէջ ինքն ըստ ինքեան արդէն գտնուում է նրա դիւրին կերպով անկման առիթը. այդ փոքրիկ թուերն աւելի հեշտութեամբ են անյայտանում ու կորչում: Քաղաքակրթութեան ստորին աստիճանի վրայ գտնուող բոլոր ազգերի յատկութիւնն է՝ կենսական ոյժերի շուտափոյթ սպառումն: Դրանց տնտեսական կռուանն անձուկ ու թերի է, չափաւորութիւնը յաճախ հասնում է աղքատութեան, կարիքը շատ շուտ-շուտ է հիւր գալիս դրանց մօտ և չկան այն նախազգուշացուցիչ միջոցները, որով բժշկականութիւնը շրջապատում է մեր կեանքը: Արկտիսի և հարավային կիսագնդի անապատներում բնութեան արտաքոյ կարգի զօրեղ ոյժերի հետ կռուելով՝ երբեմն, նա մանաւանդ մարդաբնակ աշխարհի սահմաններում, ամբողջ ազգեր կատարելապէս բնաջինջ են լինում, մեռնում: Յաճախակի լիշուած բնական ազգերի բնաջինջ լինելը սխալմամբ համարւում է միմիայն իբրև հետեանք՝ իրենցից աւելի քաղաքակրթութուած ազգերի հետ ունեցած շփման: Սակայն խնդիրն աւելի մանրամասն հետազօտելով՝ երկու դիպուածի ենք հանդիպում.

առաջինն է ինքնակործանումը, երկրորդը՝ գերակշռող քաղաքակրթութեան ազդեցութեան շնորհիւ առաջացած բնաջինջ լինելը: Սովորաբար երկուսն էլ միասին են ներգործում. ոչ մէկը դրանցից առանց միւսի գործակցութեան՝ չէր կարող այնպէս արագ իր նպատակին հասնել: Ազգերի առողջ աճման հիմքն է երկու սեռի մօտաւորապէս հաւասար թիւը. բնական ազգերի մէջ սովորաբար այդպէս չէ լինում և տղաների թիւը ըստ մեծի մասին փոքր է: Մալտուսի «հաճույական խոչնդոտը» յատուկ է մարդուն, որի հայեացքն ուղղուած է դէպի ապագան: Սակայն մարդկային հասարակութեան մէջ բարձրագոյն դասակարգերին չէ վերապահուած՝ «Ժամանակաւոր զուարճութեան զոհելովը՝ մշտական բարեկեցութիւն ձեռք բերել», այլ այն բոլոր միջոցները, որ կարող են արգելք լինել բազմանալուն, մեծ չափով գործ են դրւում ամենաստորին խաւերում. գլխաւորապէս պատերազմը, սպանութիւնը և մարդկանց յափշտակելը: Այդտեղ մարդկային կեանքի արժէքը շատ չնչին է. դրա ապացոյց կարող է համարուել մարդագոհութիւնն ու մարդակերութիւնը: Վերջապէս բնական ազգերը շատ հեռու են այն իդէալական առողջութիւնից, որ թիւրիմացութեամբ վերագրել են նրանցը. միմիայն Աֆրիկայի նեգրոսները կարող են իբրեւ շատ պնդակազմ ցեղ համարուիլ: Ընդհակառակն աւստրալիացիք, ովկիանացիք և ամերիկացիներն աւելի ևս ենթակալ են հիւանդութեանց, քան քաղաքակիրթ մարդիկ և աւելի դժուարութեամբ են օդընտելանում: Անկասկած է, որ դրանք շատ տեղերում, դեռ եւրոպացիների հետ շփուելուց առաջ, սկսել էին կամաց-կամաց ծիրուիլ: Սակայն քաղաքակրթութիւնն էլ յետոյ այդ խանգարումը հասցնում է մինչև վերջին ծայրը՝ անցկացնելով այն տարածութիւնը, որի ընդարձակութեանը յարմարեցրած էր բնական ազգերի առանձնայատուկ հասարակական և քաղաքական յօրինուածութիւնը: Քաղաքակրթութիւնը ներմուծում է այնպիսի պահանջներ և հաճութներ, որոնք այդ մարդկանց վարած կեանքի եղանակին և աշխատանքի կատարմանը չեն համապատասխանում. քաղաքակրթութիւնը բերում է դրանց համար անձանօթ ու սարսափելի աւերիչ հիւանդու-

թիւններ և անխուսափելի վէճեր ու կռիւներ: Մեծ երկրներում, ինչպէս օրինակ Հիւսիսային Ամերիկայում, Աւստրալիայում, Նոր-Զելանդիայում, քաղաքակրթութեան յառաջադիմութեան հետեանքն եղաւ բնիկների լեռ մղուելը դէպի երկրի ամենայարմար մասերը և դրա հետ սերտ կապակցուած այդ մարդկանց քանակութեան նուազումը: Փոքր երկրներում, նա մանաւանդ ուկրաինեան կղզիներում, բայց նաև Կուբա և Հայտի կղզիների վրայ բնիկները մասամբ բնաջինջ են եղել, մասամբ էլ խառնուել ուրիշ ցեղերի հետ և յամենայն դէպս՝ անյայտացել: Որտեղ որ աւելի ստորին աստիճանի վրայ գտնուող ցեղերի մեծ տոկոսութեան և յաջող բնական յարաբերութեանց շնորհիւ ոչնչացման գործողութիւնը դանդաղել է, — ինչպէս Աֆրիկայի զանազան մասերում, Հիւսիսային Ամերիկայում, Մէքսիկայում — այնտեղ տեղի է ունենում խառնուրդի կազմուելը, որ շուտով իւր վերջնական նպատակին կհասնի, այսինքն կոչնչացնի բնիկների առանձնատիւութիւններն ու ինքնուրոյնութիւնը: Արդէն մեծ տեղափոխութիւններ են տեղի ունեցել, շատերն էլ սկսել են տեղի ունենալ և շատ ընդարձակ տեղերում ազգերն ենթարկւում են այս կրաւորական շարժմանը: Հիւսիսային Ամերիկայում մինչև 95⁰ արեւմտեան երկարութեան մնացել են միայն հնդիկ ցեղերի տիւուր աւերակները. Վիկտորիայում և Նոյլիւզվալէսում հազիւ թէ հազար մարդ մնացած լինի բնիկների սերունդներից, իսկ Հիւսիսային Ասիայի, Հիւսիսային Ամերիկայի, Աւստրալիայի, Ովկիանեան կղզիների եւրոպականանալը միմիայն ժամանակի խնդիր է:

Հազարաւոր փորձերն արդէն այժմ ցոյց են տալիս մեզ, որ այսպիսի շարժումների և տեղափոխութիւնների միջոցին ցեղերը չեն կարող անփոփոխ մնալ, և նոյն իսկ ամենամեծ ցեղերը, որոնց ներկայացուցիչների թիւը հարիւրաւոր միլիոնների է հասնում, չեն կարողանում դիմանալ ամեն կողմից մըռնչող կոհակների ժայռերին դիպչելուն: Երկրի շատ մասերում փոթորկալի կերպով է առաջ գնում ցեղերի խառնուելու գործը: Հիւսիսային և արեւելեան Աֆրիկայից արաբներն ու բերբեր ցեղին պատկանողներն առաջ են գնում դէպի նեգրոսները, որոնց հեռաւոր ցեղակիցները հասնում են մինչև հարաւային

ծայրը, իրենց սեմիտական գծագրութեամբ: Հոթէնդոտների տեղը բռնում են խառնածնունդները, եւրոպացիների հետ խառնուածները: Կանադայում համարեա՝ ֆրանսիական բոլոր գաղութների յատկութիւնն է հնդիկների հետ խառնուիլը, միջին և հարաւային Ամերիկայում արդէն այսօր մեծաւիթներն ու մուլատներն աւելի պնդակազմ են, քան թէ բուն հնդիկները, Ուլկիանիայում վաղուց արդէն մալայեա-պօլինէզիացիք չերևան են եկել նեգրոսների մէջ, ամբողջ ներքին Ասիայում իշխող են հանդիսանում մոնղոլական-չինական և եւրոպական խառնուրդները, նրանք հասնում են մինչև Եւրոպայի խորքը և ազդում են մեր աշխարհամասի արևելքի ու հիւսիսի վրայ: Այս գործողութեան ընթացքում՝ թէ աւելի մեծ քանակութիւնը, թէ արագ աճումը և թէ արուեստների գերազանցութիւնը միշտ յօգուտ քաղաքակրթութեան բարձր աստիճանի վրայ գտնուողների է լինում, եթէ միայն կլիման չէ խանգարում: Քաղաքակրթութեան բարձր աստիճանների վրայ գտնուողները ոչնչացնում են ստորին աստիճանների վրայ գտնուողներին նաև այն դէպքում, երբ առաջինները մեծամասնութիւն չեն կազմում: Եթէ բնական ազգերի ընդհանուր անյայտանալու մէջ մի որևէ միջիթարական բան կայ, այդ այն ստույգ հանգամանքն է, որ դրանց մեծ մասը խառնուելով քաղաքակրթ ազգերի հետ՝ ինքն էլ քաղաքակրթւում է: Թէև յաճախ կրկնւում է իբրև թէ հին փորձերի հետևանք այն միտքը, թէ խառնուրդ սերունդները պահպանում են երկու ծնողների առաւելապէս վատ յատկութիւնները, բայց բաւական է մի հայեացք ձգել ներկայ ժամանակի ժողովուրդների կեանքի վրայ, որպէս զի տեսնենք, որ մուլատները, մեծաւիթները, արաբների ու նեգրոսների խառնուրդները հիւսիսային և հարաւային Ամերիկայում և Աֆրիկայում հնդիկների ու նեգրոսների առաջնորդներն են հանդիսանում: Մի անգամ սկսուած խառնուրդը շարունակւում է և քաղաքակրթուած ցեղի արեան ամեն մի նոր հոսանքը հետզհետէ հաւասարեցնում է գոյութիւն ունեցող տարբերութիւնները:

Եթէ ընդհանուր պատմութիւնը քաղաքակրթութեան,

Թէև ընդհատուող, բայց այնուամենայնիւ առաջ դիմող ծաւալումն է ցոյց տալիս երկրիս վրայ, դրա զօրաւոր գործոնն է քաղաքակիրթ ազգերի քանակութեան բնական գերակշռութիւնը: Մինչդեռ արագապէս աճող ազգն իւր աւելորդը ուրիշներին է տալիս, բարձր քաղաքակիրթութեան ազդեցութիւնն ինքն ըստ ինքեան գերակշռող է հանդիսանում, քանի որ այդ է խիստ բազմանալու պատճառը կամ պայմանը: Այսպիսով քաղաքակիրթութեան ծաւալումն երևում է մեզ իբրև՝ քաղաքակիրթ ազգերի ինքն իրեն ընթացքն արագացնող շարունակաբար աճումն երկրիս վրայ, որ շարունակ ձգտում է աւելի ևս կատարեալ կերպով իրագործել իբրև նպատակ և խնդիր, յոյս և ցանկութիւն յառաջագրուած մարդկային սեռի միութիւնը:

Ի վերջոյ՝ եթէ փորձենք հակառակ ընթացքով հետախուզել այն ճանապարհները, որով ընթացել են մարդկութեան ամենանշանաւոր մասերը, իբրև սկզբնակէտ մարդկային կդտնենք միատեսակ, միաժամանակ և միատեղ գոյութիւն ունեցող շատ փոփոխութիւններ, կամ ինչպէս Բլումէնբախն է ասում, ալլասերութիւնները, որ առաջ սակաւ կէտերում են միասին հաւաքւում, որպէսզի յետոյ, հաղորդակցութեան շատանալովն աւելի ևս միմեանց շօշափելու ու վերջը միմեանց այնպէս մղելու և խառնակուելու, որ սկզբնական տեսակներէց այսօր ոչ մէկն էլ գոյութիւն չունի՝ իր նախնական առանձնայատկութիւններով: Սակայն դրանց մնացորդները ցոյց են տալիս այն երկու մեծ հակադրութիւնները, որ գոյութիւն ունեն դեռ այսօրուայ ցեղերի մէջ ևս՝ հիւսիսային կիսագնդի—սպիտակ և մոնղոլական ցեղերը—և հարաւային կիսագնդի—նեգրոսների ցեղը—մէջ: Դրանց պատկանում են ցամաքային միութեան և ովկիանական բաժանման հակադրութիւնները, հիւսիսային բևեռային երկրների խորքը մտած և ովկիանոսի միջոցով բևեռային ազդեցութիւնից բաժանուած աշխարհի հակասութիւնները: Նեգրոս ազգերը կարող են մի անգամ աւելի հիւսիս ապրած լինել, քան այժմ, ինչպէս Աֆրիկայում, նաև Ասիայում և խաղաղական ովկէանոսում, յամենայն դէպս նրանք բնակւում էին

իրանց այժմեան բնակավայրերի սեղմուած տեղերից դէպի հարաւ:

II

Բնական ազգերի դիրքը մարդկութեան մէջ:

Նախ մի երկու խօսք ասենք այս էջերում յաճախ կըրկնուող «բնական ազգեր» անուան վերաբերմամբ: Այս անունը մենք տալիս ենք այն ազգերին, որոնք աւելի ենթակայ են բնութեան ճնշմանը կամ աւելի կախումն ունին բնութիւնից, քան թէ քաղաքակիրթ ազգերը: Այս անունն արտայայտում է այն տարբերութիւնը, որ գոյութիւն ունի կեանքի եղանակի, հոգեկան ընդունակութիւնների և պատմական դրութեան մէջ. քանի որ այս անունն այդ ուղղութեամբ ոչինչ չէ բացատրում և նախապաշարում, հէնց այդ պատճառով էլ կրկնակի յարմար ենք գտնում մեզ համար: Մենք ասում ենք բնական ազգեր ո՛չ թէ նրա համար, որ նրանք ըստ կարելոյն սերտ յարաբերութիւն ունին բնութեան հետ, այլ որովհետեւ նրանք ապրում են բնութեան նկատման ներքոյ: Բնական և քաղաքակիրթ ազգերի տարբերութիւնը պէտք է որոնել ո՛չ թէ իրանց՝ բնութեան հետ ունեցած կապակցութեան աստիճանի, այլ այդ կապակցութեան տեսակի մէջ: Քաղաքակիրթութիւնը բնական ազատութիւն է ո՛չ թէ լիակատար անջատման մտքով, այլ բաղմապատիկ, լայն և ընդարձակ կապակցման տեսակէտով: Հացահատիկն իւր շտեմարանում ամբարիզ գիւղացին նոյնչափ վերջնական կախումն ունի իւր արտի հողից, որչափ ճահիճներում ջրաբրինձ հնձող հնգիկը, որ ինքը չէ ցանել. սակայն այս կախումն ունենալն առաջինի համար այնչափ ծանր չէ, որովհետեւ նա իմաստութեամբ պաշար ժողովելով՝ այդ ստրկութեան շղթայի ներքոյ այնքան էլ հեշտութեամբ չէ ճընշւում. այն ինչ ամեն մի փոթորիկ, որ բրնձի հասկերը ջուրն է թափում, երկրորդի կեանքի նեարդերն է շօշափում: Մենք բնութիւնից ամբողջովին չենք ազատուի, եթէ նրան մանրամասն ուսումնասիրենք և շահուենք նրանից, այլ միայն նրա էութեան կամ ընթացքի մի մի դիպուածքից անկախ

կլինենք՝ բազմապատկելով կապակցութիւնները: Հէնց մեր քաղաքակրթութեան պատճառով՝ այսօր մենք աւելի սերտ կապակցութիւն ունինք բնութեան հետ, քան թէ երբ և իցէ գոյութիւն ունեցող բոլոր սերունդները:

Թէև այնպէս է թուում՝ թէ բնական և քաղաքակիրթ ազգերի համեմատութիւնն այդ երկուսի մէջ խոր անդունդ է բացանում, բայց այնուամենայնիւ մենք դրանով չենք բաւականանալ, այլ ամենից առաջ կհարցնենք՝ թէ ինչ դիրք ունին բռնած բնական ազգերն ամբողջ մարդկութեան մէջ:

Արդեօք կարելի է բնածին մարմնական տարբերութիւններն ի նկատի ունենալով՝ անսխալ եզրակացութիւն անել մարդկութեան ընդհանուր տարբերութիւնների տեսակի ու քանակի մասին: Ազգազրական տեսակէտից, որ ամենապարզ կերպով ցոյց է տալիս մարդկութեան մեծ և ծանրակշիռ քաղաքակրթական տարբերութիւնները, ամենից առաջ այն ցանկութիւնն ենք յայտնում, որ փաղափակիրք ցեղ գաղափարը մարդկութեան նկատմամբ աւելի մանրամասն քննուի, քան թէ այդ տեղի է ունեցել մինչև այսօր: Կարելի է նախատեսել, որ ասողներ կլինին՝ թէ քաղաքակիրթ ազգերի մարմնի կազմութեան մէջ այնպիսի յատկութիւններ կան, որոնք առաջացել են քաղաքակրթութեան շնորհիւ, ինչպէս որ միւս կողմից էլ բնական ազգերի մարմինը որոշ գծերով պարզ ցոյց է տալիս կեանքի այն եղանակի ազդեցութիւնը, որ զուրկ է այն ամենից, ինչոր մենք սովոր ենք քաղաքակրթութիւն անուանել: Անդամազնին ԳՈՒՍՏԱՆ ՖՐԻՅՐ, որ բնական ազգերը ուսումնասիրել է հէնց իրենց բնութեան մէջ, ասում է. մարդկային մարմնի ներդաշնակ գաւազանը կարելի է միմիայն փաղափակրթութեան ազդեցութեան ներքոյ: Եւ մարդ կարդալով նրա նկարագրութիւնները հոթենդոտների, բուշմանների և նոյն իսկ կաֆրների մասին, համոզւում է, որ լաւ կազմակերպուած, արտաքուստ գեղեցիկ մարմիններ նրանցում աւելի հազուադիւս են, քան մեզանում՝ զառամեալ կարծուած քաղաքակիրթ մարդկանց մէջ: Նա մի տեղ պարզ արտայայտում է, «որ առողջակազմ, կանոնաւոր զարգացած մար-

մին ունեցող գերմանացին, ինչ վերաբերում է թէ ձևերի չա-
րաբերութեանը, թէ ոյժին և թէ լիութեանը, իսկապէս գերազան-
ցում է Ա-Ֆանտուին պատկանող մարդու միջին կազմութեանը»:
Սակայն այս բանտուները, կարելի է աւելացնել, կաֆրների ճիւղա-
ւորութեան, որոնց մասին է մասնաւորապէս խօսւում այդտեղ, ա-
մենաուժեղ և վայելչահասակ ազգերից մէկն է Աֆրիկայում: Նո-
րադոյն ժամանակներում աւելի յաճախ ենք լսել այդպիսի դա-
տողութիւններ և այսօր այն ամերիկացի ազգագրի խօսքը,
թէ «Բելվեդէրի Ապօղոնի ամենալաւ նախատիպը Հնդիկն է»,
նոյն իսկ իբրեւ գեղեցիկ խօսք չի կարելի ընդունել անկասկած:
Աւելի խորը թափանցելով՝ նոյն իսկ ոսկրների կազմութեան
մէջ տարբերութիւններ են գտնուել, որոնք վերադրւում են
մէկ տեղ քաղաքակրթութեան ազդեցութեանը, մի այլ տեղ ան-
քաղաքակիրթ կեանքի ներդրածութեանը: Վիրխովը լայլան-
դացիներին և բուշմաններին ուղղակի ներկայացրել է իբրեւ
ախտաբանական, այսինքն քաղցի և կարիքի շնորհիւ թշուա-
ռացած, անկեալ ցեղեր: Սակայն ցեղերի տարբերութեան ար-
ժէքը որոշող ամենանշանաւոր փորձը, որի համար գիտութիւ-
նը շատ փոքր և միմիայն ամբողջ աշխարհի պատմութիւնը
կարող և ուժեղ է, դեռ նոր է կազմակերպւում: Ստորին կո-
չուած ցեղերի ներմուծումը բարձր ցեղերի քաղաքակիրթ
շրջանի մէջ և այն շրջափակների կործանումը, որ առաջ
ընդգիծադրւում էին այդ ներմուծմանը, ո՛չ թէ միայն մարդ-
կայնութեան մի փայլուն դործն է, այլ միաժամանակ նաև
ամենախորին գիտնական նշանակութիւն ունեցող իրողութիւն:
Ամենաստորին կարծուած ցեղերի միլիօնաւոր մարդիկը, սևա-
մորթները, առաջին անգամ կմտնակցեն ամենաբարձր քաղա-
քակրթութեան բոլոր առաւելութիւններին, իրաւունքներին և
պարտականութիւններին. ոչինչ չէ արգելւում նրանցը դործ
դնելու զարգացման բոլոր միջոցները: Եթէ այսօր միայն մօ-
տաւոր ճշտութեամբ կարողանայինք ասել, թէ մի քա-
նի սերունդների ընթացքում ի՞նչ կլինէր այն տաս-
ներկու միլիօն նեգրոս ստրուկների վիճակը, որ Ամերի-
կայում վերջին քսան տարուայ միջոցին ազատուել են ստրկու-

թիւնից և որոնք ազատութեան և նորագոյն քաղաքակրթութեան արդիւնքները վայելելով հարիւր միլիօնի կհասնեն, այն ժամանակ կարելի կլինէր վստահութեամբ վճռել՝ ցեղերի տարբերութեան մէջ եղած քաղաքակրթութեան ազդեցութեան դժուար խնդիրը: Բայց այսպէս պէտքէ բաւականանա՞նք ակնարկութիւններով և զուշակութիւններով:

Կարելի է այն կարծիքը յայտնել, որ վերջին տարիների ընթացքում տեղի ունեցած ցեղերի համեմատական ուսումնասիրութիւնները նուազեցնում են սովորաբար ընդունուած մարդաբանական ցեղական տարբերութեան կշիռը և յամենայն դէպս չեն նպաստում այն ըմբռնմանը, որ մարդկութեան այսպէս կոչուած ստորին ցեղերը նկատում է իբրև կենդանուց փոխակերպուած մարդկանց խումբ: Պրանով չենք ուզում մերժել մարդու ընդհանուր նմանութիւնը կենդանիների հետ՝ *rus* մարմնի, սակայն ժխտում ենք այն ենթադրութիւնը, թէ մարդկութեան որոշ մասերն աւելի նման են կենդանուն, քան թէ ուրիշները: Ազգերի ուսումնասիրութեան միջոցին ամեն ցեղերի մէջ էլ հանդիպում ենք այնպիսի գծերի, որոնց կենդանական կարելի է անուանել. այլ կերպ էլ չէր կարելի սպասել: Որովհետև մարդս իր մարմնի կազմութեան մէջ պահպանել է կապի իր ու նմանութիւնը, այդ պատճառով և նոյն իսկ նորագոյն համակարգող գիտնականները միայն այդ բանին կարևորութիւն տալով՝ կրկին վերադարձան Լիննէի համակարգութեանը, որ *Homo* սեռը կապի հետ միատեղ *Primates* դասին է կարգում, առանց կշտամբուելու, թէ անտրամաբանօրէն են դատում. բաւական է միայն ի նկատի ունենալ մարդկային բնութեան հոգեկան արտայատութիւնը, որպէս զի շատ կողմերից սուր կերպով աչքի ընկնի նիւթեղէն հիմքի անասնականութիւնը: Մենք ամենքս դժբախտաբար այնպէս ենք ըմբռնում, որ իբրև թէ մարդու մէջ մի գաղան է թագնուած և «անասնական» ցանկութիւն, անասնաւ և ուրիշ այնպիսի լեզուի ձևերն ապացոյց են, թէ որչափ յաճախ մեր երևակայութիւնը ստիպուած է լինում այդպիսի նմանութիւններ գտնելու: Երբ աւստրալիացի բնիկների

մի քաղցած ընտանիք անգլի ճանկերից խլում է գէշը, ոչ
ըստ բնութեան բոլոր օրէնքների վաղուց նրան էր պատկա-
նում, և մի խումբ անյագ ու նախանձոտ շնագայլերի նման
որսի վրայ ընկնելով՝ չէ դադարում լափելուց, մինչև որ նրանց
չափից դուրս լցուած ստամոքսը քնելու չէ ստիպում՝ այս ապա-
ցոյց է կեանքի եղանակի այնպիսի անասնացման, որ ճնշում է
ամեն տեսակ հոգեկան նշոյլ: Մեզ չէ զարմացնում նոյնպէս,
որ Աֆրիկայում ճանապարհորդողները՝ փախուստ տուող շիմպան-
զէների կամ օրանգների հօտերի հետ են համեմատում շփոթուած
բուշմաններին, որոնք ամեն օտարականի, լինի նա սպիտա-
կամորթ թէ սևամորթ, միևնոյն է, թշնամի են համարում: Սա-
կայն իզուր են միշտ այս խեղճ բնական ազգերի վրայ յարձակում,
որոնք բնութիւնից աւելի մեծ հակումն չունին անասնանմա-
նութեան, քան թէ մենք: Կան այնպիսի բարոյապէս ընկած
եւրոպացիք, որոնք աւստրալիացիներից usor են գտնւում:
Անասնանման լինելու կամ թէ լինել կարողանալու այս ան-
հաճոյ ընդունակութիւնը տարաբախտաբար յատուկ է ամեն
մարդու՝ ոմանց քիչ, ոմանց շատ: Այդ գլխաւորապէս կախումն ունի
քաղաքակրթութեան աստիճանին համապատասխանող այլա-
կերպուելու ընդունակութիւնից: Միմիայն քաղաքակրթութիւ-
նը կարող է մի սահման գծել մեր և բնական ազգերի մէջ:
Մեծ վճռականութեամբ պէտքէ շեշտել, որ «բնական ազ-
գեր» գաղափարն իւր մէջ չէ պարունակում ոչինչ մարդաբանա-
կան, անդամազննական ու բնախօսական, այլ միմիայն զուտ ազ-
գագրական, քաղաքակրթական գաղափար է: Բնական ազ-
գերը քաղաքակրթութեամբ խեղճ ազգեր են: Ամեն ցեղի պատ-
կանող և ամեն բնական յատկութեանց տէր ազգերը կարող
են կամ դեռ հասած չլինել քաղաքակրթութեան կամ թէ քա-
ղաքակրթութեամբ յետադիմած լինել: Հնագոյն գերմանացիներ-
ընն ու գալլերը հռովմէական քաղաքակրթութեան դիմացը հա-
մեմատաբար ոչ պակաս խեղճ էին քաղաքակրթութեամբ, քան
թէ մեր դէմ կանգնած կաֆրները և ովկիանացիք. շատերը,
որոնք այսօր ռուսաց քաղաքակիրթ ազգին են պատկանում,
Պետրոս Մեծի ժամանակ զուտ բնական ազգեր էին:

Իսկապէս մարդկութեան երկու խմբերի քաղաքակրթութեան տարբերութեան անդունդը, թէ ըստ լայնութեան և թէ ըստ խորութեան, կատարելապէս անկախ է նրանց ձիրքերի տարբերութեան մեծութիւնից: Պէտքէ ի նկատի ունենալ, որ մի ազգի քաղաքակրթութեան սեպհականութեան բարձր աստիճանի վերայ ներգործում են մեծ քանակութեամբ պատահական դիպուածներ, ուստի պէտքէ զգուշանալով դրանցով իսկոյն և ի՞նչ հետեւանքներ եզրակացնել՝ այդ ազգի հոգեկան և մարմնական կազմութեան մասին: Բարձր ձիրքերի տէր ազգերը կարող են քաղաքակրթութեամբ խեղճ լինել և այդպիսով մարդկութեան մէջ առհասարակ ստորին դիրք ունեցողների տպաւորութիւնն անել: Չինացիներն ու մոնղոլները միւսոյն ցեղին են պատկանում, բայց իրաւի տարբերութիւն կայ դրանց քաղաքակրթութեան մէջ: Այդ տարբերութիւնն աւելի աչքի կրնկնի, եթէ մոնղոլների տեղ վերցնենք բարբարոս ցեղերից մէկն ու մէկը, որոնք Չինաստանի սահմանի նահանգներում կղզիների նման են երևում՝ աւելի բարձր քաղաքակրթութեան տէր մարդկային ծովի մէջ: Ըստ նորագոյն հետազոտութիւնների այնպէս է թւում, որ աինօներից, հիւսիսային Ջապոնական կղզիների սկզբնական բնակիչներից, շատերն աւելի մօտ են կովկասեան, քան մոնղոլեան ցեղին: Բայց այնուամենայնիւ նրանք բնական ազգ են, մինչև անգամ մոնղոլ-մալայեան ջապոնացիների կարծիքով: Յեղը քաղաքակրթութեան սեպհականութեան հետ ինքն ըստ ինքեան ոչինչ կապ չունի: Թէև յիմարութիւն կլինէր ժխտել, որ մեր օրերում ամենաբարձր քաղաքակրթութիւնն այսպէս կոչուած կովկասեան կամ սպիտակ ցեղի յատկանիշն է, բայց միւս կողմից նոյնպէս նշանաւոր իրողութիւն է, որ հազար տարիներից ի վեր քաղաքակրթութեան ամեն շարժումների ընթացքում՝ իշխող է հանդիսանում մարդկանց այն ձգտումը, որով նրանք կամենում են բոլոր ցեղերին իրենց նեղութիւններին ու պարտականութիւններին մասնակից անել և այդպիսով ծանրակշիռ կարեւորութիւն են տալիս «մարդկութիւն» մեծ գաղափարին: Այդ գաղափարը թէև ժամանակակից աշխարհի

հրաշալի յատկութիւնն է համարում, բայց դրա իրականա-
նալուն շատերը դեռ հաւատ չեն ընծայում: Բայց եթէ դուրս
նայենք պատահարների այն նեղ շրջանակից, որին յան-
դգնութեամբ ամբողջ աշխարհի պատմութիւն են անուանում,
կտեսնենք, որ սկզբնական և նախապատմական ժամանակների
ներկայացուցիչներն ամեն ցեղերից էլ եղել են:

III

Քաղաքակրթութեան էութիւնը, ծագումը եւ տարածուիլը

Սակայն ո՞րն է բնական և քաղաքակրթութեամբ ազգերի տար-
բերութեան էութիւնը: Աստիճանաբար զարգացման տե-
սութիւնը պաշտպանողներն այս խնդրում համարձակ
առաջ են գալիս և այդ հարցը վաղուց որոշուած համա-
լուծ, որովհետեւ ո՞վ կարող է կասկածել, որ բնական ազգերը
«մարդկութեան ամենահին և դեռ ևս գոյութիւն ունեցող խա-
ւերն» են: Նրանք մնացորդներն են այն անքաղաքակիրթ ժա-
մանակաշրջանների, որոնց վրայից վաղուց արդէն անցել են
մարդկութեան ուրիշ մասերը, որոնք գոյութեան կռուի մէջ
բարձրագոյն ձիրքերի են հասել և քաղաքակրթութեան հա-
րուստ սեպհականութիւն ձեռք բերել: Այս տեսութեան դէմ
մենք բարձրացնում ենք այն հարցը, թէ ինչից է բաղկացած
արդեօք այդ քաղաքակրթութեան սեպհականութիւնը: Խոհա-
կանութիւնը, որ ամեն բանի հիմքն ու աղբիւրն է, ամբողջ
մարդկութեան ընդհանուր բարիքը չէ միթէ: Լեզուն եւ կրօնը
պէտք է առաջին տեղը բռնեն իբրեւ աւելի, այսպէս ասած,
ազնիւ արտայայտութիւններ և աւելի սերտ կապակցուին խոհա-
կանութեան հետ՝ ըստ համաննի այն սիրուն խօսքերի թէ.
«առանց լեզուի խոհականութիւն չէինք ունենայ, առանց խո-
հականութեան՝ կրօն և առանց մեր բնութեան այս երեք էա-
կան բաղկացուցիչ մասերի՝ ոչ ընկերական կապ կունենայինք
և ոչ ոգի»: Ճշմարիտ է, որ լեզուն մի անսահման զօրեղ ազ-
դեցութիւն է ունեցել մարդկային ոգու զարգացման վրայ.
քաղաքակրթութեամբ խեղճ ազգերի կրօնը լեզուից ոչ պակաս հա-
ւաստի կերպով պարունակում է իւր մէջ այն բոլոր սաղմերը, որ յե-

տոյ, ապագայում, պէտք է կազմեն քաղաքակրթութեամբ ազգերի հոգեւոր կեանքի հրաշալի և ծաղկալից անտառը: Արօնը մի- ևնոյն ժամանակ արուեստ և գիտութիւն, աստուածաբանութիւն և փիլիսոփայութիւն է, այնպէս որ այս աշխարհի աղքատիկ կեանքում չկայ ոչ մի իդէալական ձգտումն, որ չգըտնուէր նրա սահմանների մէջ: Այդ ազգերի քահանաների համար կարելի է ասել, բառի բուն նշանակութեամբ, որ նրանք աստուածային գաղտնիքների պահպանողներն են: Այս գաղտնիքների յետագայում տարածուիլը ժողովրդի մէջ, բառի իսկական մտքով ժողովրդականացնելը, քաղաքակրթութեան առաջադիմութեան ամենապարզ և ամենալաւ նշանն է:

Ինչ վերաբերում է քաղաքական և տնտեսական կազմակերպութեանը, բնական ազգերի մէջ նկատում ենք քաղաքակրթութեան սեպհականութեան շատ մեծ տարբերութիւններ. նրանցից շատերը բաւականին յառաջադիմել են քաղաքակրթութեան գործում: Ստույգ է նմանապէս, որ այդ տարբերութիւններն առաջանում են ոչ այնքան նրանց ընդունակութեանց զանազանութիւնից, որքան դարգացման պայմանների խիստ տարբեր լինելուց: Զարգացման ընթացքում դեր է խաղացել փոխանակութիւնը և անաչառ դիտողը շատ անգամ աւելի իրերի համաձայնութիւն է նկատել, քան տարբերութիւն: «Զարմանալի է», բացառանչում է խապմանը՝ Դամարա ցեղի սովորութեանց մասին խօսելիս, «թէ իրաւիսի նմանութիւն է տիրում աշխարհիս երեսին եղած մարդկային ընտանիքների սովորութիւնների ու գործողութիւնների մէջ: Նոյն իսկ դամարացիներն այնպիսի սովորութիւններ ունին, որոնք բոլորովին միևնոյնն են, ինչ որ նոր-դէէլանդացիներին, ինչպէս օրինակ առաջնատամների հանելը և ճկոյթի կտրելը»: Եւ որովհետեւ քաղաքակրթութեան էութիւնը կայանում է փորձառութեան դէպքերի հաւաքման, հաւաքածի պահպանման, տեւականութեան և վերջապէս նրանց զարգացումը շարունակելու կամ բազմապատկելու ընդունակութեան մէջ, այդ պատճառով խնդիր է՝ թէ ինչպէս կարելի է, որ իրականանալ քաղաքակրթութեան առաջին հիմնական պայմանը,

այսին քն քաղաքակրթութեան սեպհականութեան ժողովելը՝ հմտութեանց, գիտութեանց, ոյժի դրամագլխի ձևով։ Վաղուց արդէն համաձայնութեամբ որոշուած է, որ դրան հասնելու առաջին քայլը պէտքէ լինի բնութեան ազատաւիամ շնորհածից կախումն ունենալուց կատարելապէս դադարել և ուսել գիտակցօրէն արդիւնաւորել մարդկանց համար ամենակարեւոր պտուղները՝ սեպհական աշխատանքի միջոցով. նա՛ մանաւանդ երկրագործութեամբ և անասնապահութեամբ։ Այդ փոփոխութիւնը միանգամից ասպարեզ է բաց անում քաղաքակրթութեան ամենահեռաւոր կարելիութիւնների համար, բայց միւսնոյն ժամանակ պէտքէ նկատել, որ առաջին քայլից մինչև այսօր միայն հասած բարձրութիւնը՝ շատ հեռու է։

Մարդուս, նոյնպէս և ամբողջ ազգերի, ոգին ցոյց է տալիս բաւականին մեծ զանազանութիւն՝ ինչպէս տարբեր ձիրքերի, նոյնպէս և այն տարբեր ազդեցութիւնների շնորհիւ, որ արտաքին հանգամանքները ներգործում են նրա վրայ։ Գլխաւորապէս տատանում է ներքին կապակցութեան աստիճանը և դրա հետ միասին ոգեկան սեպհականութեան հաստատուն լինելը կամ տեղականութիւնը։ Այդ սեպհականութեան կապակցուած չլինելը և միմեանցից անջատուիլը հաստատապէս բնորոշում է նոյնպէս քաղաքակրթութեան ստորին աստիճանները, ինչպէս որ նրա կապակցութիւնը, անբաժանելի լինելը և աճման զօրութիւնը՝ բնորոշում են բարձրագոյն աստիճանները։ Քաղաքակրթութեան ստորին աստիճանների վրայ այնքան քիչ տեղ է բռնում աւանդութիւնը, որ այդ աստիճանների վրայ գտնուող ազգերը ո՛չ կարողանում են իրենց նախկին վիճակի մասին գիտակցել, ո՛չ էլ զօրացնել ու բազմապատկել իրենց ոգեկան սեպհականութիւնն՝ առանձին հանձարեղ մարդկանց հնարագիտութեամբ կամ դրսից եկող դժբաղդումների ընդունելով ու խնամելով։ Եթէ ամեն բան խաբէական չէ, հէնց այդ բանումն է ազգերի խորին տարբերութեան հիմքը։ Ըստ երևոյթին այդ հարցը շօշափում են, երբ միմեանց հակադրում են պատմական և ոչ պատմական ազգերը։ Մի-

Թէ պատմական գործերը կորած են պատմութեան համար միայն այն պատճառով, որ պատմագրութեան մէջ չեն լիջուում: Պատմութեան էութիւնը կայանում է նոյն իսկ պատահածի և ոչ թէ պատահածը լիջուում և պահպանելու մէջ: Աւելի լաւ կլինի, եթէ այս տարբերութիւնը վերագրենք ազգայնութեան անհատականութեան և յօրինուածութեան հակառակութեանը, որովհետեւ ներքին կապակցութիւնն այն ամենախորին տարբերութիւնն է ցոյց տալիս, որ գոյութիւն ունի պատմական գործունէութեան, ուրեմն և գլխաւորապէս մարդուս ողեկան շրջանում: Մարդկութեան ինչպէս ընկերական և պետական, այնպէս և ողեկան պատմութիւնն ոչ այլ ինչ է, եթէ ոչ յառաջադիմութիւն պառակտուած գործելուց՝ դէպի միաբան գործելը: Առաջին տեղը բռնում է արտաքին բնութիւնը, որով դաստիարակում է մարդկային ոգին, ձգտելով նրա հետ մի այնպիսի յարաբերութեան մէջ մտնել, որի վերջնական նպատակը բնութեան կարգաւորեալ հողեկան պատկերի շէնքն է՝ այսինքն արուեստի, բանաստեղծութեան և գիտութեան ստեղծագործութիւնը: Տարբեր ցեղերին պատկանող բնական ազգերը՝ անդամազննական — մարդաբանական մոքով՝ ազգերի խմբակցութիւններ չեն կազմում: Եւ որովհետեւ նրանք մ սրդկութեան ամենավսեմ բարիքներին — լեզուին և կրօնին — մասնակից են, ուստի և նրանց տեղը չը պէտք է մարդկութեան տոհմացոյց ծառի վերջին աստիճանի վրայ դնել, կամ թէ նրանց դրութիւնն իբրեւ ամենասկզբնական և մանկական դրութիւն ըմբռնել: Տարբերութիւն կայ մանկան արագ հասունացող տհասութեան և որոշ նկատմամբ կանգ առած և անշարժ չափահասի չնչին հասունութեան մէջ: Յինական ազգերը մօտ են այս վերջին տեսակին և առաջինից հեռու: Դրանցը մենք անուանում ենք քաղաքակրթութեամբ խեղճ ազգեր, որովհետեւ ներքին և արտաքին հանգամանքներն արգելք են եղել նրանցը՝ այնպիսի յարատեւ զարգացումն ձեռք բերել քաղաքակրթութեան շրջանում, ինչպիսին են քաղաքակիրթ ազգերի յատկանիշները և կրթութեան յառաջադիմութեան գրաւականները: Բայց և այնպէս մենք չենք վստահանալ անքաղաքակիրթ անուանել նրանցը, որովհետեւ

քաղաքակրթութեան բարձր աստիճաններին հասնելու սկզբնական միջոցները — լեզուն, կրօնը, կրակը, զէնքն ու գործիքները — ամենքըն էլ ունին և հէնց այդ և դրանց նման ուրիշ միջոցներ ունենալը — օրինակի համար յիշենք միայն ընտանի կենդանիներն ու մշակուող բոյսերը — վկայում է այն բազմաթիւ և բազմատեսակ շօշափումների մասին, որ տեղի են ունենում իսկական քաղաքակրթ ազգերի հետ:

Թէ ինչո՞ւ նրանք չեն օգտուում այդ պարզեաներից՝ պատճառները բազմազան են: Առաջին պատճառներից մէկն է համարւում նրանց նուազ հոգեկան ընդունակութիւնը: Այս բացատրութիւնը թէև յարմար է, բայց առ սակաւն անարդարացի է: Այժմ գոյութիւն ունեցող բնական ազգերի մէջ յամենայն դէպս ընդունակութեանց մեծ տարբերութիւն կայ: Բայց կարելի է ընդունել, որ քաղաքակրթութեան զարգացման ընթացքում նոյն իսկ շատ քիչ բանով աւելի բարձր ընդունակութեանց տէր ազգերն աւելի և աւելի են տիրացել քաղաքակրթութեան միջոցներին և իրենց յառաջագիմութեանն ապահովութիւն և հաստատութիւն սեպհականել, այն ինչ աւելի նուազ ընդունակութեանց տէր ազգերը չեն մնացել: Սակայն արտաքին հանգամանքները, ինչ վերաբերում է նրանց արգելող կամ նսլաոտող ազդեցութեանը, աւելի պարզ կարելի է ճանաչել ու գնահատել. ուստի և առաջ այդ հանգամանքների յիշելն աւելի իրաւացի և տրամաբանական է: Մենք ըմբռնում ենք՝ թէ ինչո՞ւ բնական ազգերի բնակավայրերը գտնւում են գլխաւորապէս մարդաբնակ երկրի ծայրագոյն եզրներում, ցուրտ և տաք աշխարհներում, հեռաւոր կղզիների վրայ, կըղզիացած սարերում և անապատներում: Մենք հասկանում ենք նրանց յետամնացութիւնն երկրի այն մասերում, որոնք երկրագործութեան և անասնասլահութեան զարգացման համար քիչ յարմարութիւններ ունէին, ինչպէս Աւստրալիան, հիւսիսային բեռնային աշխարհները և Ամերիկայի հիւսիսային և հարաւային ծայրագոյն մասերը: Անկատար զարգացման հասած օժանդակ աղբիւրների անվստահելիութիւնն իբրև մի ծանր շղթայ կախուած է նրանց ոտքից և սահմանափակում է նրանց շար-

Ժողովուրդները մի նեղ տարածութեան մէջ: Դրանից է առաջանում նրանց չնչին թիւը և դրանից էլ հետևում է նրանց հոգեկան և մարմնական վաստակի չնչին ամբողջական գումարը, հանճարեղ մարդկանց հազուադիւս լինելը, այնպէս և բացակայութիւնը այն փրկարար ճշողութեան, որ գործ է դնում շրջապատող բազմութիւնը անհատների շրջահայեցութեան վրայ և ներգործող է հանդիսանում հառարակութեան դասակարգերի և փրկարար աշխատանքի բաժանման նրպաստման գործում: Սթանդակիչ միջոցների այդ անվստահելիութիւնից մասամբ հետևում է նաև բնական ազգերի չնչին տեւականութիւնը: Թափառական հովուական կեանքը մի ընդհանուր յատկութիւն է դրանց համար և դիւրացնում է դրանց անհաստատ քաղաքական ու տնտեսական կազմակերպութեանց անկարելիութիւնը, նոյն իսկ եթէ փութաջան երկրագործութիւնը կապում է դրանցը հողակոշտի հետ: Այսպիսով յաճախ, չնայելով ճոխապէս մասնատրուած և լաւ խնամուած քաղաքակրթութեան միջոցներին, առաջանում է մի բաժան բաժան, ուժասպառ և անպտուղ կեանք: Առանց ներքին կառակցութեան՝ այս կեանքն ապահով աճումն չի կարող ունենալ. այս այն կեանքը չէ, որի մէջ առաջացան քաղաքակրթութեան առաջին սաղմերը և որ մենք պատմական շրջանի սկզբում հիանալի կերպով աճած ենք տեսնում: Այս կեանքը լի է աւելի քաղաքակրթութեան բեկորներով և քաղաքակրթական անյայտի շրջանների, աղօտ լիշողութիւններով, որոնք մասամբ պատմական շրջանի սկզբից շատ առաջ եղած պէտքէ լինեն: Ի վերջոյ, եթէ կարճ ամփոփենք՝ թէ ինչպէս ենք ըմբռնում բնական ազգերի դիրքը՝ համեմատութեամբ այն ազգերի, որոնց պատկանում ենք և մենք, կասենք. ըստ քաղաքակրթութեան՝ այդ ազգերը մեզնից ստորև գտնուող խաւ են, այն ինչ ըստ բնական կազմութեան և ընդունակութեան՝ մասամբ, որչափ որ այդ կարելի է նշմարել, հաւասար են մեզ և մասամբ էլ մեզնից շատ հեռու չեն: Սակայն այդ խաւը այնպէս չպէտքէ հասկանալ, որ իբրև թէ մեզնից անմիջապէս ստորև գտնուող զարգացման աստիճանի վրայ է, որի վը-

ըայով մենք ինքներս պիտի անցնէինք, այլ այնպէս, որ այդ իսակը հաւաքուում և կազմուում է ինչպէս կանգ առած, նոյնպէս և մի կողմը նետուած և յետամնաց տարրերից: Ուրեմն բնական ազգերը դրական յատկութեան մի զօրեղ սաղմն են պարունակում իրենց մէջ: Դրանումն է կայանում նրանց ուսումնասիրելու արժէքն ու առաւելութիւնը: Այն բացասական ըմբռնումը, որ միայն այն է տեսնում, ինչ որ նրանք չունին, համեմատելով մեզ հետ՝ մի անշրջահայեաց անգնահատութիւն է:

Քաղաքակրթութիւն բառով սովորաբար արտայայտում ենք մի որոշ ժամանակի բոլոր հոգեկան ստացուածքի գումարը: Երբ խօսում ենք քաղաքակրթութեան աստիճանների, կամ բարձր և ստորին քաղաքակրթութեան ու կիսաքաղաքակրթութեան մասին և քաղաքակիրթ ու բնական ազգերը հակադրում ենք միմեանց՝ մեր ընդունած որոշ չափը վերցնում ենք քաղաքակրթութեան այն բարձր աստիճաններից, որին մենք ինքներս ենք հասել, որովհետև միայն մեր քաղաքակրթութիւնն ենք մենք քաղաքակրթութիւն անուանում: Սակայն ամեն ազգ ունի հոգևոր ձիրքեր և իւր կեանքում հոգեկան կարողութիւններ է զարգացնում: Ամեն մէկը զիտութեան և կարողութեան մի որոշ գումարը իւրն է անուանում, որ և ներկայացնում է իբրև իւր քաղաքակրթութիւնը: Այս «հոգեկան ստացուածքների գումարների» զանազանութիւնը գտնւում է ոչ թէ միայն դրանց մեծութեան, այլ և աճման զօրութեան մէջ: Քաղաքակրթութեան ազգը երևում է մեզ իբրև մի զօրեղ ծառ, որ դարաւոր աճմամբ ուժեղ և յարատև կերպով բարձրացել է քաղաքակրթութեամբ խեղճ ազգերի ստորութեան և անցողականութեան վրայից: Կան բոյսեր, որ ամեն տարի ոչնչանում են. կան և ուրիշ բոյսեր, որոնք հասարակ խոտից դառնում են պնդակազմ ծառեր: Զանազանութիւնն ամեն մի տարուայ աճման արգասիքի պահպանութեան, հաւաքման և միացման մէջն է: Այդպէս էլ բնական ազգերի նոյն իսկ անցողական աճումը, որ կոչուել է նոյնպէս ազգերի մացառներ, առաջ կրքերէր մի յարատև բան, ամեն մի նոր սերունդ աւելի վեր կը-

բարձրացնէր և առաջուց ձեռք բերած արդասիքից կտար նրան աւելի հաստատուն լինակէտ՝ եթէ նրա մէջ պահպանման և միացման ձգտումը ազդեցիկ լինէր: Սակայն այդ չկայ, և այդ պատճառով այն բոլոր բարձրանալու որոշած բոյսերը գետնի երեսին են մնում և թշուառ կերպով ոչնչանում՝ կռուելով օդի և լուսի համար, որ նրանք վերևում լիութեամբ կարող էին վայելել: Քաղաքակրթութիւնը շատ մարդկային սերունդների արդասիքն է:

Ինչպէս տարածական, այնպէս և ժամանակի սահմանափակման—որ առանձնացնում է թէ խրճիթները, զիւղերը, ազգերը և թէ միմեանց հետևող սերունդները—մէջ է կայանում քաղաքակրթութեան ժխտումը. դրա հակառակ՝ միմեանց հետ ապրողների միաբանութեան եւ միմեանց հետեւողների կապակցութեան մէջ է գտնում նրանց զարգացման կարելիութիւնը: Միմեանց հետ ապրողների միաբանութեամբ ապահովում է քաղաքակրթութեան պահպանումը, իսկ սերունդների կապակցութեամբ՝ ծաւալուիլը: Քաղաքակրթութեան զարգացումը գանձ ժողովել է: Փանձերն ինքն ըստ ինքեան են աճում, երբ պահպանող ոյժեր են հսկում դրանց վրայ: Մարդկային ստեղծագործութեան և գործունէութեան ամեն ասպարեզներում իւրաքանչիւր բարձր զարգացման հիմքը միութիւնն է: Միմիայն միաբան գործունէութեամբ, փոխադարձ օգնութեամբ, լինի այդ թէ ժամանակակիցների մէջ և թէ սերնդէ սերունդ, յաջողուել է բարձրանալ քաղաքակրթութեան այն աստիճանը, որի վրայ որ այժմ կանգնած են մարդկութեան ամենազարգացած անդամները: Այս միութեան եղանակից և ծաւալումից է կախուած այդ աճումը: Այդ բանին աւելի նրա պատեւ են ժամանակակից ազգերի անհատական մրցութեանն ոյժ տուող մեծ համայնքներն ու պետութիւնները, քան թէ տոհմերի բազմաթիւ փոքրիկ ու համազօր միութիւնները:

Բարձրագոյն քաղաքակրթութեան զարգացման էական նշանը մենք համարում ենք յառաջադիմութեան ձգտողների ըստ կարելոյն ներքին կապակցութիւնը՝ թէ միմեանց և թէ նախկին սերունդների հետ և դրանից առաջացած արդիւնքի

և վաստակի ամենամեծ գումարը: Պայրայեղութիւնների մէջ են գտնուում այն բոլոր միջին աստիճանները, որ մենք ամփոփում ենք կիսաֆաղափակրթութիւն բառի մէջ: Մի քանի խօսք էլ այս անուան մասին: Մինչդեռ բարձրագոյն քաղաքակրթութեան մէջ տեսնում ենք թէ պահպանող և թէ առաջ մղող և զարգացնող ոյժերի եռանդուն գործադրութիւնը, կիսաքաղաքակրթութեան մէջ առաջիններն իսկապէս մեծ գործունէութեան են հրաւիրւում, այն ինչ վերջինները յետ են մնում և այդպիսով կիսաքաղաքակրթութեան խոնարհագոյն աստիճանը որոշում: Կիսաքաղաքակրթութեան միակողմանիութիւններն ու անկատարելութիւնները վերաբերում են ոգեկան յառաջադիմութեանը, մինչդեռ անսեսական զարգացումն աւելի շուտ է հաստատուում: Երկու հարիւր տարուց առաջ, երբ Եւրոպան և հիւսիսային Ամերիկան շոգիով, երկաթով և ելէքտրականութեամբ դեռ ևս իրենց հսկայական թռիչքները չէին արել, Չինաստանն ու Ջապոնիան եւրոպացի ճանապարհորդներին սաստիկ զարմացնում էին իրենց երկրագործութեան, արհեստների և վաճառականութեան արգասիքներով և նոյն իսկ իրենց այսօր խորին անկման հասած ջրանցքներով և ճանապարհներով: Սակայն եւրոպացիները և եւրոպացիների սերունդագոգերն Ամերիկայում և Աւստրալիայում վերջին երկու հարիւր տարուայ ընթացքում ո՛չ թէ միայն հասան այդ թռիչքի ետեւից, այլև վաղուց արդէն նրանից առաջ են դնացել: Այստեղից կարելի է որոշել թէ ինչումն է կայանում չինական քաղաքակրթութեան և առհասարակ ամեն կիսաքաղաքակրթութեան առեղծուածը: Ի՞նչն էր արդեօք պատճառը, որ արեւմուտքը արեւելքին զերազանցեց, եթէ ոչ՝ ազատ ոգեկան ստեղծագործութեան հաճոյքը: Վօլտէրն իրաւացի կերպով նկատում է, որ բնութիւնը չինացիներին տուել է բոլոր գործիները՝ գտնելու այն ամենը, ինչ որ օգտակար է իրենց, բայց դրանից աւելի ոչինչ: Ինչ վերաբերում է օգտակարին, գործնական կեանքի արուեստներին՝ նրանք մեծ արդիւնք են ցոյց տուել, մինչդեռ երեւոյթների պատճառների և կապակցութիւնների մասին նոյն իսկ մի գիտնական հայեացք, մի տեսութիւն անգամ չեն տուել մեզ:

Արդեօք այս թերութիւնն առաջացել է նրանց ընդունակութեանց վերաբերեալ մի պակասութիւնից, թէ նրանց ընկերավարական և քաղաքական կազմակերպութեան անշարժութիւնից, որ պաշտպանում է միջակը և ճնշում հանճարեղը: Բայց որովհետև այդ թերութիւնը մնում է նրանց կազմակերպութեան ամեն տեսակ փոփոխութիւնների միջոցին, պէտք է ընդունենք, որ առաջանում է ընդունակութեան պակասութիւնից: Միմիայն դրանով կարելի է բացատրել նաև նրանց ընկերական կարգերի անշարժութիւնը: Վճռական պատասխանը հարկաւ միայն ապագան կարող է տալ, որովհետև դեռ պէտք է տեսնել՝ թէ ինչ յառաջադիմութիւն ցոյց կտան այդ ազդերը այն քաղաքակրթութեան ճանապարհի վրայ, որ այնպիսի մեծ եռանդով ցոյց են տալիս դրանցը Եւրոպան և հիւսիսային Ամերիկան: Բայց որ դրանք այդ ճանապարհով կամենում են կամ թէ պէտք է գնան, վաղուց արդէն անկասկած է: Այս խնդիրն անկարելի է վճռել, եթէ քաղաքակրթութեան ամբողջութեան տեսակէտն ընդունենք, որ Չինաստանի, Ջապոնիայի և այլն անկատարելութիւնները համարում է իբրև նշան դրանց կեանքի ընդհանուր ստորին աստիճանի և յաճախ միևնոյն ժամանակ՝ իբրև ապացոյց դէպի լաւ փոխուելու փորձերի լիակատար անյաջողութեան: Եթէ նրանք նոյն իսկ միայն կիսաքաղաքակրթութեան ընդունակ լինէին, յառաջադիմութեան կարիքը Եւրոպայից և հիւսիսային Ամերիկայից զօրեղ գործոններ առաջ կբերէր, որոնք հետզհետէ կկերպարանափոխէին ժողովրդի զանգուածը: Այժմեան քաղաքակրթ աշգերից շատերին այսպիսի գործողութեան եղանակն է բարձրը դիրքի հասցրել: Յիշենք միայն ռուսներին, ունդարացիներին և այն հանգամանքը, որ միլիոնաւոր դերմանացիների և այլ գաղթականների շնորհիւ այդ կիսամոնղոլները բազմատեսակ յաջողութիւններ են ունեցել եւրոպացիների մէջ:

Ամեն մի աստիճանի և ազգի քաղաքակրթութեան ստացուածքի գումարը բաղկացած է նիւթական եւ ոգեկան կարողութիւնից: Այդ երկուսը միմեանցից զանազանելը մեծ կարևորութիւն ունի, որովհետև դրանք շատ տարբեր նշանակու-

թիւն ունին ամբողջ քաղաքակրթութեան ներքին արժէքի և գլխաւորապէս դրա զարգացման ընդունակութեան համար: Այդ երկուսը միեւնոյն միջոցներով, միեւնոյն դիւրութեամբ և միաժամանակ չեն ձեռք բերում: Ոգեկան քաղաքակրթութեան ստացուածքի հիմքը նիւթական քաղաքակրթութիւնն է: Մարմնական կարիքներին բաւականութիւն տալուց յետոյ, ոգեկան ստեղծագործութիւնները շռայլութիւն են երևում: Այդ պատճառով և քաղաքակրթութեան ծագման վերաբերեալ ամեն մի հարց կարելի է վերլուծել հետեւեալ հարցման. ինչն է նրա պատում քաղաքակրթութեան նիւթական հիմքերի զարգացմանը: Այստեղ գլխաւորապէս պէտք է շեշտել, որ թէև այդ զարգացման ճանապարհը բնութեան միջոցների դործագործութիւնն է մարդու նպատակների համար, բայց և այնպէս մեծագոյն գնահատութեան արժանի է՝ ոչ թէ բնութեան նիւթերի հարստութիւնը, այլ ոյժերի կամ աւելի լաւ ասենք, ոյժերի գրգռումը: Բնութեան այն ձիւրերը մարդու համար ամենից մեծ արժէք ունին, որոնց շնորհիւ կբացուին նրա ներքին ոյժերի աղբիւրները յարատեւ գործունէութեան համար:

Ինքն ըստինքեան հասկանալի է, որ ամենից քիչ կարող է անել այդ բնութեան այն հարստութիւնը կամ այն, այսպէս կոչուած, բարիքը, որ ազատում է նրան այնպիսի որոշ աշխատանքից, որ ուրիշ հանգամանքներում կարեւոր կլինէր, ինչպէս օրինակ ջերմութիւնը արեւադարձային երկրներում դիւրացնում է խրճիթ շինելը և զգեստներ հագնելը, քան թէ բարեխառն գօտիներում: Եթէ համեմատենք այն, ինչ որ կարող է տալ բնութիւնը՝ մարդկային ոգուն յատուկ կարելիութիւնների հետ, կտեսնենք, որ տարբերութիւնը խիստ մեծ և առաւելապէս հետեւեալն է. բնութեան ձիրքերը տեսակով և քանակութեամբ յարատեւ անփոփոխ են, սակայն ամենակարեւորների արգասիքը տարեց-տարի տատանում և անհաշիւ է: Դրանք կապակցուած են որոշ արտաքին հանգամանքների հետ, որոշ գօտիներում՝ կախումն ունին որոշ բարձրութիւններից և հողի որոշ տեսակներից: Դրանց վերաբերմամբ մարդկային ոյժը հէնց սկզբից սահմանափակ շրջա-

նի մէջ է դրուած. դա կարող է ընդարձակել նրա ոգու և կամքի ոյժի զարգացումը, բայց ոչ երբէք՝ բեկանել: Պրա հակառակ՝ մարդուս ոյժերը ամբողջովին միմիայն իրեն են պատկանում. նա ոչ թէ միայն կարող է գործադրել դժ- քանցը, այլև բազմապատկել և զօրեղացնել՝ առանց մի որևէ սահմանափակման: Ոչինչ այնպէս համոզեցուցիչ կերպով չէ ցոյց տալիս մեզ բնութեան շահագործման կա- խումն ունենալը մարդկային կամքից, ինչպէս երկրի ամեն կողմերում, ամեն կլիմաներում, բարձրութեան ամեն տեսակ աստիճանների վրայ բնակուող բնական ազգերի միանման դը- րութիւնը:

Պատահամբ չէ, որ կուլտուր (քաղաքակրթութիւն) խօսքը հասկացւում է նաև երկրագործութեան մտքով: Այդ- տեղ է դրա ստուգաբանական արմատը և այն բանի հիմքը, ինչ որ մենք հասկանում ենք կուլտուր բառի ընդարձակ մըտ- քով: Քետնի մէջ ոյժերի մի ամբողջ գումար թափելն ամենա- լաւ և շատ բան խոստացող սկիզբն է, որով անկախութիւն ենք ստանում բնութիւնից և որով նա իւր նպատակին է հաս- նում հոգու շնորհիւ: Զարգացման շղթայի օղակներն այստեղ ամենից հեշտութեամբ են միանում, որովհետև տարեց - տարի կրկնուող աշխատանքով՝ միևնոյն քետնի վրայ կենդրոնանում է ստեղծագործութիւնը և հաստատւում աւանդութիւնը. և այդ- պիսով այդտեղ առաջ են գալիս քաղաքակրթութեան հիմնա- կան պայմանները:

Քաղաքակրթութեան զարգացման համար անկասկած ա- մենամեծ նշանակութիւն ունին բնութեան պայմանները, որոնք թոյլ են տալիս երկրի պտղաւէտութեան և նրա վրայ գործ- դրուած աշխատանքի հարստութեան հաւաքելը: Բայց այնու- ամենայնիւ չի կարելի ընդունել, ինչպէս ասում է նաև Բուկ- լէն, թէ պատմութեան մէջ ոչ մի օրինակ չկայ, որ մի եր- կիր իւր սեպհական ջանքերով քաղաքակրթութեան լինի, եթէ վերոյիշեալ պայմաններից մէկն առանձին յաջող հանդամանք- ների մէջ չլինի: Մարդուս առաջին գոյութեան համար ան- կասկած ամենից նպաստաւոր էին տաք, խոնաւ և պտուղնե-

րով առատ երկիրները և սկզբնական մարդուն ամենից դիւրութեամբ կարելի է երեւակայել իբրև արեւադարձային երկրի բնակիչ: Սակայն միւս կողմից՝ եթէ քաղաքակրթութիւնն ասելով պէտքէ հասկանանք միայն մարդու ոյժերի զարգացումը բնութեան շնորհիւ, ապա ուրեմն այդ կարող էր տեղի ունենալ միմիայն որևէ ճնշողութեան ներքոյ, որ մարդուն անյաջող հանգամանքների մէջ դնելով՝ պէտքէ ստիպէր նրան իրեն համար աւելի հոգալ, քան թէ արեւադարձի փափուկ որորանում: Բարեխառն երկիրները մենք միեւնոյն կարեւորութեամբ ընդունում ենք իբրև քաղաքակրթութեան որորան, ինչպէս որ արեւադարձային երկիրները՝ իբրև մարդու որորան: Մէքսիկայի և Պերուի բարձրաւանդակութեանց վրայ աւելի քիչ պտղաւէտ երկիրներ կան, քան թէ դրանց շրջապատող դաշտավայրերում, բայց այնուամենայնիւ Ամերիկայի ամենաբարձր զարգացումն այդ երկու բարձրաւանդակների վրայ ենք գտնում: Նոյն իսկ այսօր դրանք իրենց բարձր քաղաքակրթութեամբ անապատների պէս ամայի և անբերրի են երևում՝ համեմատելով այն արտաքոյ կարգի փարթամ և հրաշալի բրնձութիւն ունեցող դաշտերի և դարատափերի հետ, որոնք շատ տեղերում միայն մի օրուայ ճանապարհ հեռու են այդ բարձրաւանդակներից: Արեւադարձային երկրներում հողի պտղաւէտութիւնն առ հառարակ խիստ նկատելի կերպով նուազում է, իսկ բարձրաւանդակներն ամեն տեսակ կլիմայական պայմանների մէջ, երբէք այնքան պտղաւէտ չեն լինում, որքան դաշտավայրերը, բլրաշատ երկիրները և սարերի գոշերը: Եւ ամերիկական քաղաքակրթութեան կենդրոնավայրերն այդ երկու բարձրաւանդակների վրայ էին. Մէքսիկայի քաղաքակրթութեան կենդրոնը, Տենոխտիտլան մայրաքաղաքը, (այժմեան Մէքսիկայի տեղը) գտնւում էր 2280 մետր բարձրութեան վրայ, իսկ Պերուի Կուցկօ քաղաքը 3500 մետր բարձրութեան վրայ էր: Այդ երկու երկրներումն էլ աւելի քիչ ջերմութիւն ու խոնաւութիւն կայ, քան թէ միջին և հարաւային Ամերիկայի միւս մեծագոյն մասերում:

Վերոյիշեալից կարելի է եզրակացնել, որ թէև քաղաքակրթութիւնն իւր արմատով սերտ կապակցութիւն ունի գետնի մշակութեան հետ, սակայն առաջինի զարգանալովը՝ վերանում է այդ երկուսի յարաբերութեան անհրաժեշտութիւնը: Երբ ազգերն աճում են իրենց քաղաքակրթութիւնն էլ խզում է գետնի հետ ունեցած կապը և հետզհետէ զարգանալով աւելի և աւելի ստեղծում է այնպիսի գործոններ, որոնք միմիայն արմատացմանը չեն ծառայում: Կարելի է ասել, որ երկրագործին յատուկ է մի բնական անգորութիւն. նա զէնքի գործածութեան անսովոր լինելով՝ սիրով ստացուածք է ձեռք բերում, նստակեաց կեանք վարում և կորցնում է իւր արիութիւնն ու ձեռներէցութեան ոգին: Ընդհակառակը քաղաքական ոյժի արտայայտութեան ամենաբարձր չափը գտնում ենք ռուսոյնցի և հոլիւնցի մօտ, որոնք շատ հանգամանքներով երկրագործին իբրև բնական հակոտնեայ են հանդիսանում, նա՛ մանաւանդ հովիւները, որոնք իրենց շարժունութեան հետ միացնում են բազմութեամբ՝ ասպարէզ իջնելու ընդունակութիւնը, իսկ ոյժի հետ կապակցում են կարգապահութիւնը: Հէնց այն, ինչ որ երկրագործին դժուարութիւն է պատճառում՝ այդ ոյժը զարգացնելու համար, այստեղ իբրև նպաստող հանգամանք է առաջանում. այնէ նստակեաց կեանքի պակասութիւնը, շարժունութիւնը, ոյժի արիութեան և զէնք գործածելու վարժութիւնը: Եւ եթէ մի հայեացք ձգենք երկրի վրայ, կտեսնենք իսկապէս, որ այսպէս կոչուած կիսաքաղաքակիրթ ազգերի ամենահաստատուն կազմակերպութիւններն առաջացել են այդ տարրերի ի մի ձուլուելովը: Չինաց անպայման երկրագործ ժողովրդին, մոնղոլներից յետոյ, իշխում են մանգշունները, պարսիկներին տիրում են Թուրքեստանի իշխողները. եզիպտացիները գտնւում էին հեկսոսների, արաբների և այժմ էլ գտնւում են թուրքերի իշխանութեան ներքոյ. սրանք բոլորը թափառական ազգեր են: Աֆրիկայի ներսը թափառական վահումաններն են Ուգանդա և Ունիորո հաստատուն պետութիւնների հիմնադիրներն ու պահպանողները: Սուդանի պետութիւնների շարքի մէջ, որ ծովից-ծով է ձգւում, ամեն մի առանձին պետութիւն հիմնուել է

անապատներից և ամալի տեղերից գաղթողների ձեռքով: Մէքսիկայում բիրտ ացտէկները նուաճել են քաղաքակիրթ երկրագործ տօլտէկներին: Անապատի և մշակուած երկիրների սահմաններում վերույիշեալ կանոնը կարելի է բազմաթիւ օրինակներով հաստատել: Սրանով մենք ճանաչում ենք պատմութեան մի օրէնքը: Ուրեմն սակաւ պտղաւէտ բարձրաւանդակներն ու անմիջապէս դրանց կից գտնուող երկրի շերտերն ամեն տեղ ո՛չ թէ այն պատճառով են նպաստել բարձրագոյն քաղաքակիրթութեան զարգացմանը և քաղաքակիրթ պետութիւնների կազմութեանը, որովհետեւ ցուրտ կլիմա ունենալով՝ ստիպել են ժողովրդին երկրագործութեամբ պարապելու, այլ որովհետեւ այստեղ թափառական ազգերի նուաճող և կապակցող ոյժը միացաւ քաղաքակիրթ օազիսներում միատեղ սեղմուած սակայն պետութիւն կազմելու անկարող, երկրագործի աշխատասիրութեան հետ:

Քաղաքակիրթութեան նպաստող և խոչընդոտ հանգիսացող տեղական հանգամանքներից դուրս՝ նման կլիմայական պայմաններում, կլիմայի ներգործող յատկութեան շնորհիւ առաջանում են քաղաքակիրթ երկիրներ, որոնք գօտու ձևով դասաւորուած են երկրագնդի շուրջը: Դրանց կարելի է քաղաքակիրթական գօտիներ անուանել: Այն պատմական փորձերի հիման վրայ, որ ցայսօր յայտնի է մարդկութեանը, բարեխառն գօտին իսկական քաղաքակիրթական գօտին է: Իրողութիւնների ամբողջ շարքեր վկայում են այդ բանը: Վերջին երեք հազար տարուայ ամենանշանաւոր պատմական զարգացումներն այս գօտուն են պատկանում: Հնագոյն պատմութեան սիրտը բաբախում էր Միջերկրական ծովի շուրջը, այդ գօտու տակ. որ այդ պատահական բան չէր, շատ որոշ կերպով ապացուցանում է այն հանգամանքը, որ պատմական զարգացումը հաստատուն մնաց բարեխառն գօտու տակ՝ նաև Եւրոպայից դուրս, նոյն իսկ եւրոպական քաղաքակիրթութեան նոր աշխարհներում տարածուելուց յետոյ, ինչպէս Ամերիկայում, Աֆրիկայում և Աւստրալիայում: Թէև անվերջ կերպով բազմաթիւ թելեր են հաւում

այս գործուածքի մէջ, բայց որովհետեւ այն ամենը, ինչ որ ստեղծագործում են ազգերը, վերջ ի վերջոյ անհատի գործունէութեան վրայ է հիմնւում, անկասկած է, որ ըստ կարելոյն շատ գործելու ընդունակ անհատներ հաւաքւում են բարեխառն գօտու տակ: Քաղաքակրթութեան առանձին շրջանների միանում են մի քաղաքակրթական գօտու տակ, որտեղ հաղորդակցութիւնները, փոխանակութիւնը են քաղաքակրթութեան տարրերի բազմանալն ու հաստատուիլն ամենայաջող պայմանների մէջ են լինում. ուրիշ խօսքով որտեղ, քաղաքակրթութեան պահպանումն և յառաջադիմութիւնը կարող են ծաղկել աշխարհագրական ամենամեծ հիմքերի վրայ: Հնադոյն կիսաքաղաքակրթութիւնները, որոնց մնացորդները գտնւում են արեւադարձային երկրներում, պատկանում են այնպիսի ժամանակի, երբ քաղաքակրթական աշխատանքը այնպիսի մեծամեծ պահանջներ չէր անում անհատներից, բայց երբ հէնց այդ պատճառով քաղաքակրթութեան բարդաւաճումըն անցողական էր: Հին և նոր քաղաքակրթութեան աշխարհագրական ծաւալման ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ քաղաքակրթութեան գօտիների քաղաքակրթական վաստակի աճումը տեղի է ունեցել բարեխառն կլիմայում: Այս խորհրդածութիւնը մեծ նշանակութիւն ունի մարդկային սեռի սկզբնական պատմութեան, նրա տարածման պատմութեան և արեւադարձային երկրներում մնացած քաղաքակրթութեան բեկորների բացատրութեան համար: Քաղաքակրթութեան անկման մի ուրիշ հղանակը ցոյց են տալիս այն օրինակները, որ քաղաքակրթութեամբ աւելի ստոր ազգերը կլանում են քաղաքակրթութեամբ իրենցից աւելի բարձր կանգնած ազգերին. առաջիններին օգնութեան է հասնում կեանքի դժուար պայմաններին աւելի լաւ յարմարուելու առաւելութիւնը: Արհամարում սկրէլինդներն իրենց մէջ ընդունեցին Պրեօնլանդիայի նորմաններին: Չէ որ արկտիսի սառցապատները գնացող եւրոպացիների խմբերն, այլտեղ եղած ժամանակի ընթացքում, յարկադրուած էին հարմարուել էսկիմոսների սովորութեանը և ուսանել արկտիսի բնակիչների արուեստներն ու հմտութիւններ:

քը, որպէս զի կարողանային բւեռային զօտու բնութեան ոյժերի հետ կռիւ մղել: Այդպէս էլ արեւադարձային և բւեռային երկրների գաղթականութեան յաջող հետևանքներն ապահովելու համար՝ եւրոպացիք յարմարուած են բնիկների պահանջներին:

Անկատար միջոցներով զլուխ եկած լիակատար քաղաքակրթութիւնը ճաշակազիտական և բարոյազիտական տեսակէտից աւելի վսեմ երևոյթ է, քան թէ՛ դէպի բարձրը ձգտելու և աճման միջոցին տարրալուծուած քաղաքակրթութիւնը: Այդ պատճառով և բարձր ու ստորին քաղաքակրթութեանց իրար շօշափելու առաջին հետևանքներն անհաճելի են լինում: Յիշենք օրինակի համար կէտորսների և փախստական նաւաստիների առաջին գաղթականութիւնները՝ արուեստներով և աւանդութիւններով հարուստ Նոր-գլէէլանդ կամ հաւայի կղզիներում և կտեսնենք թէ լինչպիսի ազդեցութիւն ունեցաւ այդտեղ առաջին օղէտների և անառականոցների՝ բացուիլը: Հիւսիսային Ամերիկայի վերաբերմամբ առաջին անգամ Զօօլկրաֆտն ուշադրութիւն դարձրեց այն արագ անկման վրայ, որ կրեց բնիկների տնական արդիւնաբերական գործունէութիւնը, երբ սպիտակամորթները ներմուծեցին աւելի կատարելագործուած և նպատակայարմար գործիքներ, կշիռներ, զգեստներ և այլն: Երբ եւրոպական վաճառականութիւնը ղիւրութեամբ սկսեց մատակարարել այն ամենը, ինչ որ երկար, յարատեւ և դժուար աշխատանքով հազիւ կարողանում էին անկատար կերպով պատրաստել մինչև այդ ժամանակ, բնիկների գործունէութիւնը պակասեց ոչ թէ մշտն դաշտում, ուր նրանք բաւականին գործ էին անում, այլ և առհասարակ թուլացաւ, կորցրեց ինքն իրեն վրայ վստահ լինելու զգացմունքը և այդպիսով ժամանակի ընթացքում նոյն իսկ արուեստն անյայտացաւ: Այսօր յայտնի է մեզ, որ նոյնը տեղի է ունենում Աֆրիկայում, Պօլինէզիայում և խեղճ էսկիմոսների աշխարհում: Աֆրիկայի համար հաստատուած կանոն է, որ ծովեզրներին տարածուած է քայքայման շրջանը, զրանից լիտոյ գալիս է բարձր քաղաքակրթութիւնը, իսկ ամենալաւը երկրի ներսումն է,

որ դեռ ևս շօշափուած չէ: Նոյն իսկ ջապօնական ինքնուրոյն
արուեստը նաՀանջեց՝ արուեստագիտական կողմէ ց աւելի ստո-
րին աստիճանի վրայ գտնուող եւրոպականի դիմացը:

ԿԵԱՐՈՆԱԿՈՒԻ

գերմաներենից թարգ. ԻՍ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ.